Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ

№ 5

(192)

2006թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

[library stamp]

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԻ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունել է ԼՂՀ Սահմանադրության նախագիծը, որն արժանացել է համաժողովրդական հավանության:
Այսօր «Գիտությունը» տպագրում է ԼՂՀ Սահմանադրության նախագծի ներածականը, որն ինքնիշխան պետություն Արցախի, արցախյան ժողովրդի արժանապատվության, տոկունության, հպարտ, ազատ և անկախ ապրելու աներեր կամքի պերճախոս վկայություն է:

Նախագիծ

ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Մենք՝ ժողովուրդս Արցախի
- ազատաբաղձ ոգով առլեցուն,
- իրագործելով մեր նախնիների երազանքը, մարդու և ժողովրդի իր հողում ազատ, անվտանգ ապրելու և արարելու բնական իրավունքը,
- արտահայտելով անսասան կամք՝ զարգացնելու և պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն ստեղծված է 1991 թվականի սեպտեմբերի 2-ի հռչակագրով և 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքներով ինքնորոշման իրավունքի հիմքի վրա հայտարարված անկախ,
- որպես ազատ, իրավահավասար քաղաքացիների ազատ և ինքնիշխան պետություն,
- որպես պետություն, որը հիմնված է մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքների և ազատությունների հարգման, ապահովման և քաղաքացիական հասարակության սկզբունքների վրա, և որտեղ մարդը, նրա կյանքն ու անվտանգությունը հասարակության և պետության համար բարձրագույն արժեքներ են,
- հաստատելով հավատարմությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին 1992 թվականի Հռչակագրի սկզբունքներին,
- երախտագիտությամբ հիշելով մեր նախնիների և ներկայիս սերունդների հերոսական պայքարը ազատության վերականգնման համար,
- խոնարհվելով ազատության և անկախության համար պատերազմում ընկածների հիշատակի առջև,
- ոգեշնչված աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների ցուցաբերած միասնության վսեմությամբ,
- վերածնելով Արցախում ազգային պետականության պատմական ավանդույթները,
- լի վճռականությամբ՝ ստեղծելու ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն հանուն մարդու և հասարակության ազատության, անվտանգության, պաշտպանվածության, բարեկեցության և կայուն զարգացման,
- ձգտելով իրավահավասարության, փոխադարձ հարգանքի և խաղաղ գոյակցության հիմքի վրա բարեկամական հարաբերություններ զարգացնել բոլոր ժողովուրդների և առաջին հերթին՝ հարևանների հետ,
- ցանկանալով, որ արդարությունը, խաղաղությունը, համաձայնությունը և համագործակցությունը ժողովուրդների միջև լինեն մարդկության ամենաբարձրագույն արժեքները,
- հանդես գալով հանուն խաղաղ և արդարացի աշխարհակարգի, որը համապատասխանում է ընդունված համընդհանուր սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին,
- գիտակցելով մեր պատմական հայրենիքի ճակատագրի համար մեր պատասխանատվությունը ազատության համար պայքարում ընկածների, մեր նախնիների, ներկա և ապագա սերունդների առջև,
- իրականացնելով մեր ինքնիշխան իրավունքը,

մեզ համար, մեր հետնորդների և բոլոր նրանց համար, որ ուզում են ապրել արցախյան հողում, ոգեշնչված ազատության պտուղներով՝ ընդունում և հռչակում ենք սույն ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

Թեև անցյալ դարի սկզբին կենսաբանությունը ուսկայական բռիչք կատարեց, այնուամենայնիվ, բջիջի կառուցվածքի բնագավառը օրեցօր նորանոր սենսացիոն հայտնագործություններ է արձանագրում:

Մոսկվայում մեծ շուքով բացվեց հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հուշարձանը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. հայոց մայրաքաղաք

(Ա ն դ ր ա դ ա ր ձ)

Բարսումցի Վասիլ Լազյանը տեղանունների անստույգ ստուգաբանություն է կատարում «Գարդմանի կանչ» ամսաթերթում տպագրված հոդվածով (տե՛ս «Մեր գյուղերի անունները» խորագրված նյութը, 2004, թիվ 12/44, էջ 7):

Քանի որ հոդվածում նշված բնակավայրերի անվանումները տարբեր իմաստ են կրում, ապա նրանց կիրառման բանաձևերն էլ տարբեր են, և լուծման պրոցեսը՝ բարդ: Ես օգտվում եմ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»-ի օրենքներից, այդ իսկ պատճառով էլ ընթերցողիս ուղեղը չծանրաբեռնելու համար հիմնավորում եմ առայժմ միայն մեկ կայուն տեղանվան սպառիչ ստուգաբանությամբ:

«Տիգրանակերտ» տեղանունն առաջացել է Տիգրան Մեծի անունից: Եվ նման տեղանունը ոչ միայն Գարդմանաց աշխարհում է: Կան նաև մոտ տասը տարբեր բնակատեղիներում:

Տիգրան անձնանունը հայկական չէ: Հայերեն թարգմանաբար կնշանակի թագավոր կամ իշխան:

Հիմա բացահայտենք, թե ինչպես է «Տիգրանակերտ»-ը դարձել «Տկռակերտ»:

Նախ՝ գրենք բառացի Տիգրանակերտ գրությունը: Այստեղ բառն արտահայտված է արտադրիչի տեսքով: Ավելի բացված տեսքով և հանրահաշվորեն այն կընդունի՝

Տxիxգxրxաxնxաxկxեxրxտ գրությունը:

Որից հետո արտահայտենք երկու բազմանդամի տեսքով՝

(Իxաxն) x(տxգxրxաxկxեxրxտ)

➢4

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐՁ

ԽՈՍՔ ՄԵԾԱՐԱՆՔԻ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ԿՈՍՏԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ծննդյան 80-ամյակը:

Ծնվել է էջմիածին քաղաքում: Բնությունը Կոստանյանին օժտեց մարդկային ամենայն բարեմասնություններով՝ կյանքում լինել և արարել միայն լավն ու բարին:

Եվ այսպես սկսվեց նրա կյանքի ճանապարհը:

Կ. Կոստանյանը 1943 թվականին ընդունվել, գերազանց սովորել և 1948 թվականին ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիկոտեխնոլոգիական ֆակուլտետը և նույն տարում ընդունվել է Լենինգրադի Տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրան՝ ընտրելով «Ապակու տեխնոլոգիա» մասնագիտությունը, որը և դարձավ հիմնաքար նրա գիտական գործունեության համար:

1952 թվականին գերազանց պաշտպանելով դիսերտացիան Կոստանյանը ստանում է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կոստանյանի աշխատանքային կենսագրությունն սկսվել է լաբորանտից և հասել մինչև գիտության դոկտորի աստիճանի, իսկ 1976 թ.՝ պրոֆեսորի կոչման:

1969-1986 թ.թ. նա եղել է էլեկտրավակուումային ապակիների գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը: Այդ տարիներին մեծ առաջընթաց ապրեց հայրենական ապակու արտադրությունը, հենվելով այն գիտական մտքի վրա, որոնց հեղինակն էր նա:

Գիտական աշխատանքին զուգընթաց Կոստանյանը ծավալել է մանկավարժական լայն գործունեություն: 1955 թվականից մինչև օրս նա դասավանդում է Հայաստանի Ճարտարագիտական համալսարանում, իսկ 1986 թվականից ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի անօրգանական պոլիմերների լաբորատորիան՝ միաժամանակ հանդիսանալով այս երկու ինստիտուտների գիտական խորհուրդների նախագահը: Աշխատանքային գործունեության ողջ տարիների ընթացքում նա պատրաստել է գիտությունների 25 թեկնածուներ, հեղինակ է 9 մենագրությունների, 350 հոդվածների և 120 գյուտերի:

Բարձր գնահատելով Կոստանյանի նվաճումները գիտության բնագավառում 1977թ. նա ընտրվեց Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996թ. Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Կոստանյանի արժանիքները անգնահատելի են սիլիկատների ֆիզքիմիայի և ապակու բնագավառներում: Անկախ սոցիալական պայմաններից նա միշտ ծառայել է գիտությանը ի նպաստ իր ժողովրդի: Նա կրթել է բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրեր, որոնք նպաստել են այնպիսի հազվագյուտ ապակիների ստացմանը, որոնք կիրառվել են ոչ միայն ռադիոէլեկտրոնիկայի, կիսահաղորդիչների, այլ նաև ավիացիայի և տիեզերական հետազոտությունների բնագավառներում:

Կոստանյանի բազմահարուստ ուսումնասիրությունները զեկուցվել են հանրապետական, միութենական, միջազգային կոնֆերանսներում և սիմպոզիումներում:

Կոստանյանի գիտական ուսումնասիրությունները դեռ երկար կմնան ապակու հետազոտությունների բնագավառում և կարող են անսպառ աղբյուր լինել հետագա առավել կատարելագործությունների համար:

Գիտության անխոնջ ծառան ունի կառավարական բազում պարգևներ, իսկ 2003 թվականին պարգևատրվել է «ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ» մեդալով:

Ակադեմիկոս Կոստանյանը. դասավանդելով ինստիտուտում իր գիտական ձգտումներով վարակում է երիտասարդ սերնդին և ակամա հիշեցնում Վահան Թեքեյանի այս բառերը՝ «Ինչ տվեցի ուրիշին, այն մնաց ինձ»:

Հենվելով այն պարզ ճշմարտության վրա, որ մասնագիտությունն է ընտրում մարդուն և ոչ հակառակը՝ լինելով պարզից էլ պարզ, թափանցիկ, նա նման է այն ապակիներին, որոնց հեղինակն է նա, երբեմն դյուրահալ, երբեմն էլ դժվարահալ: Որեմն, իրոք, մասնագիտությունն է ընտրում մարդուն:

Այսօր Կ. Կոստանյանը, չնայած իր պատկառելի հասակին, նորից շարունակում է գրել ու գրել, ուսումնասիրել ու պրպտել, ձգտելով գիտության մշակի իր դերը, գիտելիքները որքան կարելի է շատ ու շուտ փոխանցել երիտասարդ սերնդին:

Գիտություն տանող ճանապարհը միշտ եղել է բարդ, խոչընդոտներով լի, սակայն Կոստանյանը այն հաղթահարել է՝ դուրս գալով պայծառ հաղթանակներով, և այդ նվիրումը գիտությանը, նրա պարագայում բարձր է գնահատվել:

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան հարուստ լինելով գիտական նվաճումներով՝ նոր հազարամյակում էլ ցանկանանք, որ ավելի ու ավելի ամրապնդվի, նոր ստեղծագործական լիցք և կորով ներդրվի այն երիտասարդների շնորհիվ, որոնց իր թողած հետքերով առաջնորդում է մեր սիրելի Կ. Կոստանյանը:

Ցանկանում ենք նրան ստեղծագործական անսպառ եռանդ, քաջառողջություն և երկար տարիների կյանք:

Այս փոքրիկ շարադրանքը թող լինի ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի երախտիքի խոսքը մեր ակադեմիկոսին:

ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կոլեկտիվ

Միացյալ արիկոմը հաշվետվություն է տալիս

Հոկտեմբերի 25-ին կայացավ ԳԱԱ միացյալ արիկոմի կոնֆերանսը, որին նախորդել էին ԳԱԱ հիմնարկների արիկոմների հաշվետու-ընտրական ժողովները: Կոնֆերանսը լսեց և քննարկեց ԳԱԱ միացյալ արիկոմի նախագահ Կիմա Միքայելյանի հաշվետվությունը՝ 2001-2006 թթ. արիկոմի գործունեության մասին: Համառոտ ընթերցողին ենք ներկայացնում առանձին հաղվածներ ԳԱԱ միացյալ արիկոմի հաշվետվությունից:

...Գիտությունների ազգային ակադեմիայի համար հաշվետու ժամանակաշրջանը եղել է գիտական նվաճումների ժամանակաշրջան, որոնք ձեռք են բերվել աշխատանքային և սոցիալական անասելի ծանր պայմաններում:

Վերջին 1,5 տարում ակադեմիայում տիրում է անհանգստության, տագնապի, վաղվա օրվա նկատմամբ անվստահության, անորոշության մթնոլորտ, որը պայմանավորված է սպասվող և բազմաթիվ անհայտներով շղարշված բարեփոխումների գործընթացով: Այդ անհանգստությունը վերջին ամիսներին ավելի է խորացել՝ պայմանավորված 65 տարին անց տնօրենների պաշտոնաթողության և նոր տնօրենների ընտրության գործընթացով:

2006 թ. ապրիլին հրաժարական տվեց ակադեմիայի նախագահ Ֆաղեյ Սարգսյանը, որը ակադեմիան ղեկավարում էր 1993 թվականից: 2006 թ. մայիսի 17-ին ակադեմիայի ընդհանուր ժողովը պրեզիդենտ ընտրեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին: Կոնֆերանսը շնորհավորում ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին և հույս հայտնում, որ նոր նախագահի և արիմիության համագործակցությունը կլինի այնպիսին, ինչպիսին եղել է դեռևս Վիկտոր Համբարձումյանի ժամանակ: Եվ սա շատ կարևոր է, քանի որ հանրապետության արիմիությունների վիճակը վատացել է:

1992 թ. սկսած աղքատությունը և կարիքը թափանցել են հասարակության բոլոր խավերը, ազգաբնակչության մեծ մասը դարձել է այդ չարիքի զոհը՝ աղքատ և ընչազուրկ: Այս դառնությունից զերծ չեն մնացել նաև ակադեմիայի աշխատողները, քանի որ նրանց աշխատավարձը զգալիորեն ցածր է սպառողական զամբյուղի արժեքից և բավականացնում է միայն աշխատանքի գալու և հաց գնելու համար: Ակադեմիայի աշխատողների 80%-ից ավելին աղքատ են:

ԳԱԱ ԱՄԿ-ն ելնելով ՀՀ արիեստակցական կազմակերպությունների միության մասին գործող օրենքի դրույթներից պարտավոր է սատար կանգնել իր աշխատողներին և պաշտպանել նրանց սոցիալական ու իրավական շահերը: Դրա համար արիմիությունը ֆինանսական ոչ մի հնարավորություն չունի, նրա բյուջեն ձևավորվում է աշխատողների աշխատավարձից գանձվող 1% անդամավճարով, որի 80%-ը մնում է կազմակերպությանը, իսկ 20%-ը փոխանցվում է ԱՄԿ: Ուրեմն նշված առաքելության համար մնում է գտնել այլ միջոցներ ու ճանապարհներ, թե ինչքանով այն կհաջողվի՝ պայմանավորված է արիմիության լիդերի ձգտումներով, աշխատելու ցանկությամբ ու կարողությամբ:

Տարիներ շարունակ մենք ուշադրությունը կենտրոնացրել ենք առողջապահության բնագավառի վրա, հաշվի առնելով համակարգի աշխատողների մեջ բուժման կարիք ունեցողների զգալի թիվը և վճարունակ չլինելու փաստը:

Այս բնագավառում հաշվետու 5 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի կատարվել է բավական լուրջ աշխատանք:

1999 թ. գործում Է Աղվերանի գիտաժողովների տունը, որտեղ ամառվա ամիսներին հանգստանում են մեր աշխատողները և նրանց ընտանիքների անդամները: Յուրաքանչյուր տարի նախագահը տրամադրել է որոշակի գումար՝ աշխատողների անվճար հանգստի համար: Այս տարի նորընտիր նախագահը այդ նպատակով տրամադրել է 400.000 դրամ: Ի գիտություն մեր պատգամավորների՝ Աղվերանի գիտաժողովների տունը չի վաճառվելու, այն վերանորոգվում է հիմնովին և 2007 թ. կհանձնվի շահագործման:

Յուրաքանչյուր տարի արիկոմի ներկայացմամբ համակարգի 150-160 աշխատող ստացել է 6000-ական դրամ օգնություն ակադեմիայի կենտրոնացված ֆոնդերից:

Այս միջոցառումներից մեր աշխատողներին տրված օգնության գումարը տարեկան կազմում է 3,5-4 միլիոն դրամ: Սա, իհարկե, մեր հաջողությունն է, որը ձեռք է բերվել մեծ դժվարությամբ, բայց դա շատ քիչ է:

Սոցիալական ծանր պայմաններից դուրս գալու միակ ռեալ ճանապարհը աշխատավարձի եռակի-քառակի բարձրացումն է: Նման պահանջով ԱՄԿ-ի լիազոր ներկայացուցիչների խորհուրդը բազմիցս դիմել է կառավարությանը:

Այսօր գիտությունը ֆինանսավորվում է պետբյուջեի 0,25%-ի չափով, որը ոչինչ չասող թիվ է և օգտագործվում է միայն աշխատավարձ վճարելու համար: Նման ֆինանսավորման պատճառով ոչ միայն վատթարացել են աշխատողների սոցիալական պայմանները, այլև գիտությունը կազմակերպելու, աշխատելու հնարավորությունը: Հաճախ լսում ենք, որ ասում են՝ լավ գիտություն արեք, որ լավ փող ստանաք: Բայց չէ որ չկա լավ կամ վատ գիտություն, պարզապես կա վատ կամ լավ արված գիտություն: Տարիներ շարունակ գիտական հիմնարկները ֆինանսավորում չեն ստանում գիտության համար, որի հետևանքով ԳԱԱ հիմնարկներն իրենց հոյակապ շինություններով և գիտնականներով օրեցօր վեր են ածվում ավերակների՝ կաթող տանիքներով, խարխուլ պատերով, ջարդված պատուհաններով, ժանգոտված ջրախողովակներով, առանց լույսի, ջրի, հեռախոսակապի: Տարրական պայմաններ չկան փորձարարական աշխատանքների համար՝ նորագույն սարքավորումներ, քիմիան՝ առանց փորձանոթների ու քիմիական ռեակտիվների է, երկրաբանությունը՝ առանց արշավախմբերի և այլն:

Աշխատողի սոցիալական պաշտպանվածության երաշխիք է կոլեկտիվ պայմանագիրը, որը կնքվում է հիմնարկի տնօրինության և արիմիության միջև, 3 տարի ժամկետով: Այդպիսի պայմանագիր ունի ԱՄԿ-ն ԳԱԱ նախագահության հետ: Դեռևս 2005 թ. մենք պայմանագրի ձևը բաժանել ենք հիմնարկների արիկոմներին՝ տնօրինության հետ այն կնքելու համար: Ցավոք, մինչև այսօր ոչ բոլոր կազմակերպություններում է այն կնքվել: Կարծում եմ նորընտիր արիկոմների առաջին գործը պետք է լինի կոլեկտիվ պայմանագրերի կնքումը, որը մի կողմից կապահովի արիկոմի մասնակցությունը տնօրինության կողմից իրագործվող գիտական, տնտեսական գործունեությանը, մյուս կողմից որոշակի դրույթներ կմշակի աշխատողի շահերը պաշտպանելու խնդրում:

Հաշվետու ժամանակաշրջանում ԱՄԿ-ն բազմաթիվ գրություններ, նամակներ, հեռագրեր է ուղղել հանրապետության նախագահին, վարչապետին, տարբեր նախարարների՝ պահանջելով բարձրացնել գիտության ֆինանսավորումը, կտրուկ ավելացնել գիտաշխատողների աշխատավարձը, վճարել հավելավճարներ և դրանց չափով բարձրացնել գիտաշխատողների կենսաթոշակը, գիտական աշխատանքը դիտելով որպես մտավոր աշխատանք, վերականգնել գիտաշխատողներին արտոնյալ արձակուրդ հատկացնելու նախկինում գործող կարգը: Մեր պահանջները մենք քննարկել ենք համակադեմիական կոլեկտիվ ժողովներում, հանրահավաքներում, հանդես ենք եկել ռադիոյով և հեռուստատեսությամբ: Այս բոլոր քայլերը մենք ձեռնարկել ենք ԱՄԿ-ի լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստի որոշմամբ:

Միացյալ արիմիութենական կոմիտեն միշտ ձգտել է բարձրացնել արիմիությունների հեղինակությունը, ցույց տալ, որ նա աշխատողների շահերը պաշտպանող միակ հասարակական կազմակերպությունն է, որ կուլ չի գնում առանձին մարդկանց ամբիցիաներին և խիստ տարբերվում է բազմաթիվ այլ հասարակական կազմակերպություններից:

Արիմիության կոնֆերանսը հավանություն տվեց միացյալ արիկոմի գործունեությանը, նշեց առանձին թերություններ: Կոնֆերանսը ընտրեց ԳԱԱ միացյալ արիկոմի նոր կազմ: Միացյալ արիկոմի նախագահ վերընտրվեց Կիմա ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՏԵՍԱԿԵՏ

Ինչպես պահպանել և ֆինանսավորել գիտությունը

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Օտարները մեր հանքավայրերի շահագործման ժամանակ օգտագործում են ԽՍՀՄ-ի օրոք և հետո մեր երկրի միջոցներով պատրաստված կադրերը՝ երկրաբաններին, լեռնային ինժեներներին,հարստացնողներին, գեոդեզիստ-մարկշեյդերներին, քիմիկ-անալիտիկներին, էներգետիկ և մեխանիկ ինժեներներին, շինարարներին՝ առանց այդ մասնագետների պատրաստման համար միջոցներ ծախսելու: Ժողովուրդն ասում է. «Իբր շատ սիրուն էինք՝ ծաղիկ էլ հանեցինք»: Իբր թե մենք անգործ երկրաբան քիչ ունեինք, հիմա էլ պարոնայք հնդկաստանցիները Սոտքի հանքավայրի տարածքում աշխատելու համար Թուրքիայից 20 երկրաբան են բերել: Ինչո՞ւ և ո՞ւմ թողտվությամբ: Հարցերի պատասխանը թողնենք ՀՀ կառավարությանը:

Եվ այսպես, հարգելի կառավարություն, քանի որ մեր ընդերքի հարստությունները տվել-ավիրել եք օտարներին, ապա բարի եղեք նրանցից պահանջելու այն ամենը, ինչը նրանք պարտավոր են կատարել: Այն է՝ գումարներ հատկացնել շահագործվող հանքավայրերի պաշարների համալրման համար (ԽՍՀՄ-ի օրոք ընհավասարեցնել որևէ նախարարության կամ հենց Ազգային ժողովի՝ ինստիտուտը նոր ավարտած, առաջատար (ոչ գլխավոր, այլ միայն և միայն առաջատար) մասնագետի աշխատավարձին: Հարցի պատասխանն էլ այն է, որ այս տարի կազատվի ԳԱԱ բնագավառի աշխատողների առաջին կեսը, հաջորդ տարի՝ մնացած կեսը, իսկ երրորդ տարում կփակվի, ավելի ճիշտ՝ կոչնչանա Գիտությունների ազգային ակադեմիան և կիրագործվի ՀՀ հին ու նոր իշխանությունների ցանկությունը: Դրանից հետո թե ի՞նչ կլինի Հայաստան երկրում, ի՞նչ կկատարվի Հայաստանի ներսում և Հայաստանից դուրս, դա ոչ մի բարձր պաշտոնյայի չի մտահոգում: Գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի օրգանիզմում բորբոքված կույր աղիք են համարում և ցանկանում են «կտրել ու հեռացնել»: «Չկա ԳԱԱ, չկա ակադեմիայի պրոբլեմ»,- ահա մեր կառավարության կարգախոսը:

Կարծում եմ (և մենք բոլորս էլ գիտենք), որ ԳԱԱ ինստիտուտների գործունեությունը ունի բազում թերություններ: Չնայած գիտնականներին վճարվող չնչին, զավեշտալի աշխատավարձին՝ ինստիտուտներում կան շատ լավ աշխատողներ և համեմատական կարգով՝ վատ (թույլ) աշխատողներ: Ասեմ, որ վերջիններիս թիվը մեծ չէ, և դրանց, իմ կարծիքով, մեղադրել չի կարելի: Մարդիկ աշխատում են կիսաքաղց վիճակով, տները չեն ջեռուցվում, և ստիպված են լինում բնակարանների 1-2 սենյակները փոքր-ինչ տաքացնել էլեկտրականությամբ, որի համար տարվա 5 ամիսների ընթացքում վճարում են ստացած աշխատավարձի 60-70 տոկոսը: Դրա հետ էլ կան կոմունալ այլ ծախսեր՝ ջուր, աղբահանություն, բնակսպասարկման վարձ, գույքահարկ և այլն, որոնք տանում են ամսվա աշխատավարձի 10-15 տոկոսը: Հենց սա է պատճառը, որ գիտնականները դոնեդուռ ընկած՝ ձգտում են ինչ որ տեղից մի քանի դրամ վաստակել՝ իրենց և ընտանիքի գոյությունը քարշ տալու համար:

Այսքանից հետո դե եկ ու այդ մարդկանց լավ աշխատելու պահանջ ներկայացրու: Եվ մի՞թե տրամաբանական է կամ իրավացի, որ 15-18 հազար դրամ աշխատավարձ ստացող գիտաշխատողին մենք պարտադրենք, որպեսզի նա ամեն օր վերարկուի մեջ փաթաթված, ցրտից կծկված՝ նստի չջեռուցվող իր աշխատասենյակում և «արտադրանք տա»:

Ես չեմ ասում, որ ամեն ինչ լավ է, ավելին, այն ինչ կա այսօր՝ լավ չէ: Ակադեմիայի բնագավառը անպայման վերակառուցելու (բարեփոխելու և բարեկարգելու) կարիք ունի, բայց դա պետք է անի ինքը՝ ակադեմիան, ակադեմիայի նախագահությունը և ոչ այլ ոք, ասենք ՄԱԿ կամ այլ հապավումով կազմակերպություն:

Հայաստանին պե՞տք է գիտություն՝ թե՞ ոչ: Այս հարցին պատասխանելու համար բերենք մի փոքրիկ, արտաքուստ շատ պարզունակ օրինակ լեռնահանքային ու մետալուրգիական արդյունաբերությունից: Ինչպես հայտնի է, Հայաստանում լեռնահանքային արդյունաբերությունը հիմնականում բավարարվում է կիսաարտադրանքների՝ խտանյութերի թողարկումով: Չունենք մետալուրգիական ավարտուն շրջափուլեր (Երևանի մաքուր երկաթի գործարանում ոչ մեծ ծավալներով վերամշակվում են մոլիբդենի խտանյութերը, իսկ Ալավերդիում պղնձի խտանյութերից թողարկվում է փոքրաքանակ՝ մոտ 8 հազ. տ սև պղինձ): Մոլիբդենի և պղնձի հետ հարակից տարածված բազմաթիվ ցրված ու հազվագյուտ տարրերը՝ սելենը, տելլուրը, բիսմուտը, երկաթը, վանադիումը, պլատինոիդները, ծծումբը, ռենիումը , ոսկին, արծաթը՝ չեն կորզվում (բացառությամբ մոլիբդենի հետ տարածված ռենիումի փոքր քանակի՝ 20 տոկոսի) ու անօգուտ կորչում են: Այնինչ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիայի կողմից (ղեկավար՝ Կ. Հակոբյան) մշակվել են մոլիբդենի, պղնձի, ծծմբի հրաքարի և բազմամետաղային հանքաքարերի կոլեկտիվ խտանյութերի համալիր վերամշակման անթափոն, էկոլոգիապես մաքուր, սկզբունքորեն նոր տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են մոլիբդենի, ռենիումի, պղնձի, երկաթի, ծծմբի, ոսկու, արծաթի և շատ այլ արժեքավոր տարրերի կորզման բարձր աստիճան (մոլիբդենի կորզումը՝ 98, 98.5) տոկոս, ռենիումինը՝ 94-96 տոկոս, ծծմբինը՝ 98 տոկոս և այլն): Նշված տեխնոլոգիաների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանի Դաշնությունը, որոնք էլ նշված լաբորատորիային գրանտներ են շնորհել՝ հետազոտություններն ավելի ևս խորացնելու և արդյունքներն իրենց տրամադրելու նպատակով: Այս իրողության կողքին կատարվում է աններելի հանցանք: Մեր հանրապետությունը ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում այդ խնդրին և շարունակվում է մեր հանքավայրերի շահագործման իրավունքը օտարներին նվիրելու գործընթացը:

Այո, դեռևս կենսունակ մեր գիտական ներուժը ունակ է և կարող է իր վճռական նպաստը բերել ոչ միայն մեր երկրի պաշտպանունակության հզորացմանը, այլև տնտեսության զարգացմանը, երկրի հարստացմանը: Ահա ինչու գիտությունը պետք է պահպանվի ու զարգանա, գիտությունը մեր գոյատևման, լիարժեք ազգ ու ժողովուրդ լինելու պայմանն է: Հետևությունը միանշանակ է՝ գիտությունը պետք է արժանավայել ֆինանսավորում ստանա (նա իր պարտքը կվերադարձնի բազմապատիկ): Իսկ այդ ֆինանսները հայթայթելու համար վերևում մենք նշեցինք բազմաթիվ միջոցներից մի քանիսը միայն: Ուրեմն մեր իշխանություններին կոչում եմ ողջամտության և գործունեության, որոնք թելադրված լինեն Հայաստանի ապագայի և հայ ժողովրդի ազգային շահերով:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր

ՄԵՐՆ ՈՒՐԻԵ Է

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՄԵՆԹԱԼԻՏԵՏ

Ի՞նչ տարբերություն արևելյան և արևմտյան մենթալիտետների միջև: Այս հարցի պատասխանը հրաշալի ներկայացրել է ամերիկյան «Ֆորբս» ամսագիրը:

Ավելի ճիշտ, «Ֆորբսը» տեղեկություններ է հրապարակել այն մասին, թե ինչպիսի ավտոմեքենաներ են նախընտրում աշխարհի ամենահարուստ գործարարները:

Որքան էլ տարօրինակ թվա, այսօրվա գերմիլիարդատերերը բավական համեստ մեքենաներ են վարում: Մասնավորապես, աշխարհի ամենահարուստ մարդը «Մայքրոսոֆթ» ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը, որի կարողությունը այսօր գնահատվում է 50 միլիարդ դոլար, անձնական օգտագործման երկու ավտոմեքենա ունի՝ 1991թ. թողարկման «Պորշե 911» և 1988թ. «Պորշե 959»: Երկու ավտոմեքենաներն էլ համարվում են միջին կարգի և հասանելի են միջին կարողությունների տեր մարդկանց: Ի դեպ, «Պորշե 959»-ն է վարում «Մայքրոսոֆթի» մյուս հիմնադիրը՝ Փոլ Ալենը (22 մլրդ դոլար), որը նաև վարում է 18 տարվա «Մազդա պիկապ»: Իսկ «Մայքրոսոֆթի» մյուս հիմնադիր Սթիվեն Բալմերը՝ չնայած իր ունեցած 13,6 մլրդ դոլարին, ընդամենը մեկ մեքենա ունի՝ 1981 թվականի «Լինքոլն Կոնտինենտալ»:

28 մլրդ դոլարի կարողություն ունեցող շվեդ գործարար Ինգվար Կամպրադը ընդամենը մեկ մեքենա ունի՝ «Վոլվո 240 GL» (1993թ.): Դա ընդհանրապես ժողովրդական մեքենա է համարվում: Չնայած ինքը Ինգվար Կամպրադը, հազվադեպ է իր մեքենան վարում, նա նախընտրում է աշխատանքի գնալ ավտոբուսով:

Սրանք՝ արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներ են: Արևելյան մենթալիտետի ակնհայտ կրող է, օրինակ, Սաուդյան Արաբիայի թագավորի զարմիկ, արքայազն Ալվալիդ Բին Թալալ Ալ Սաուդը (20 մլրդ): Վերջինս այս պահին ունի «Ինֆինիտի FX45», «Համմեր», «Վոլվո XC90», «Ռոլլս-Ռոյս Ֆանտոմ» մակնիշի նորագույն ավտոմեքենաներ: Ընդ որում, արաբ արքայազնը յուրաքանչյուր նոր ավտոմեքենան երկու օրինակից է գնում: Մեկը ինքն է վարում, մյուսը թիկնապահը:

Ինչ վերաբերում է Հայաստանի մեծահարուստներին, ապա նրանք այսօր հաստատ նույնիսկ ուշադրություն չէին դարձնի Բիլ Գեյթսի կամ Ինգվար Կամպրադի մեքենաների վրա: Իրենց մեքենաները թե՛ կարգով, թե՛ գնով, թե՛ «պրեստիժի» մակարդակով «ծալած» ունեն Բ. Գեյթսի «Պորշեին»:

Սակայն, միջազգային հանրության ֆինանսական օգնություններով և բարեգործական նպաստներով ապրող Հայաստանի մի քանի մեծահարուստներ ոչ միայն իրենց կապիտալով, այլև աշխարհի ամենաթանկ ավտոմեքենաներով լրջորեն մրցակցում են ամենահարուստ երկրների միլիարդատերերի հետ:

Ի՞նչ արած. հայերը միշտ էլ աչքի են ընկել իրենց ծայրահեղություններով՝ մի բևեռում հարուստներ (ծայրահեղ), մյուսում՝ աղքատներ (ծայրահեղ)...

Շարունակությունը...





Վահագն ԴԱՎԹՅԱՆ

Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ լիներ...

(հատված «Անվերնագիր» հուշագրություն-էսսեից)

...Լավ է հիշեցի, անքնությունից էի խոսում: Այո, այո, անքնությունից...

Փորձել եմ: Ամեն ինչ՝ չի օգնել:

Եվ գիտե՞ք, ի վերջո, ինչ եմ արել, սկսել եմ վեպեր գրել, պատմական մեծ, հաստափոր վեպեր... Բայց չսարսափեք, որովհետև մտքիս մեջ եմ գրել: Նախ Տիգրան Մեծից եմ սկսել, բայց իսկույն զգալով, որ շունչս փոքր է այդ Մեծի համար, անցել եմ որդուն՝ Արտավազդին: Եվ հենց որ անցել եմ սրան, քնի փոխարեն զայրույթի մի ալիք է բարձրացել մեջս. արքայից արքա, թշվառդ. քեզ ո՞վ էր ստիպում, որ պետական գործերդ թողած, նստես ու դրամաներ գրես քեզ համար... Բանաստեղծդ մեծափառ... ի՞նչ է, չգիտեի՞ր, որ բանաստեղծներն ու արքաները հավերժական ոսոխներ են, դու ինչպե՞ս էիր ուզում այդ երկուսը համատեղել թշվառ անձիդ մեջ: Տեղն է քեզ, արքայից արքա, տեղն է: Եկավ այն գող Անտոնիոսը, խաբեց մեծափառ բանաստեղծիդ, ոսկե շղթաներ դրեց ոտքերիդ ու ձեռքերիդ և քեզ նվեր տարավ իր հոմանուհի Կլեոպատրային: Տեղն է քեզ:

Մոռացել եմ, թե նշանավորներից ով է ասել, որ եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, աշխարհի հետագա բախտը բոլորովին այլ ձևով կդասավորվեր...

Այդ խոսքը լսելիս սկզբում բարեհոգորեն ժպտացել եմ, բայց հետո մտածել, այո, եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, ապա իսկապես կ'արող էր եթե ոչ ամբողջ աշխարհի, ապա գոնե Հայաստանի բախտը այլ ձևով դասավորվել...

Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, այդ անպիտան Անտոնիոսը այդպես խենթորեն չէր սիրահարվի նրան և նրա առաջ հպարտանալու համար այդպես նենգորեն ու տմարդորեն չէր գերի մեր արքա Արտավազդին, ձեռքերին ոսկե շղթա չէր դնի և իբրև նվեր չէր տանի իր հոմանուհուն՝ իր չտարած հաղթանակով պարծենալու համար:

Չէ՞ որ այդ Անտոնիոսը պարսիկներից ջարդված, բզկտված, սոված, տկլոր հազիվ էր կարողացել ծողոպրել և իրեն գցել Հայաստան:

Եթե Արտավազդը իսկական արքա լիներ և ոչ իսկական բանաստեղծ, իսկ նա, ինչպես երևում է, իսկական բանաստեղծ է եղել, ապա, ջարդված, անուժ Անտոնիոսին ինքն էլ մի հարված կտար ու վերջ...

Բայց չէ, ոչ միայն հարված չի տվել, այլև լայնորեն բացել է հյուրընկալության դռները, տաքացրել նրան իր ծոցում, սնել, ոտքի է հանել նրա ջարդուփշուր բանակը, մի ամբողջ ձմեռ հոգացել պետքերը, մտածելով, թե մարդ ենք վերջապես, ընկածի նկատմամբ պիտի բարեգութ լինենք...

Իսկ սույն Անտոնիոսը, ինչպես երևում է, թունդ է սիրահարված եղել Կլեոպատրային, նրա բարեմասնություններին, անթերի քթին, խիստ է ցանկացել պարծենալ նրա առաջ ու հենց որ իրեն փոքր-ինչ զորացած է զգացել, նորից Հայաստան է եկել, Արտավազդին կանչել է իր վրանը, շղթաներ դրել ձեռքերին ու իբրև ռազմավար նվեր է տարել Կլեոպատրային...

Վա՜յ գող Անտոնիոս, վա՜յ շուն-շանորդի, վա՜յ սրիկա...

Եվ այդ օրվանից հայոց աստղը սկսել է թեքվել...

Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, Արտավազդի հետ այդ ողբերգությունը չէր կատարվի, նա կշարունակեր թագավորել, ու թեև իսկական արքա չէր, այլ բանաստեղծ, բայց, այնուամենայնիվ, կկարողանար շենացնել իր երկիրը, իսկ նրա հետնորդները հավանաբար կկարողանային ի մի բերել բոլոր հայ հողերը, Մեծ Հայքին միացնել Փոքր Հայքն ու Ծոփքը. ստեղծել մի զորեղ տերություն, որից կերկնչեին թե՛ պարսիկները, թե՛ Հռոմը:

Եվ ես ժամանակների վրայից մի մեծ թռիչք կատարելով, հասնում եմ միջնադար, հասնում եմ Անի...

Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, ապա Անին պիտի ոչ թե Բագրատունյաց փոքրիկ թագավորության, այլ Հայոց հզոր տերության մայրաքաղաքը լիներ: Եվ քանի որ արաբները եվրոպացիների առաջ փակել էին հարավային ծովերը, նրանք Արևելքի հետ առևտուր էին անում Հայաստանի վրայով. ապա Անին օրեցօր ծաղկում էր, հարստանում, և, ինչպես պատմիչն է գրում, հովիվներն անգամ արդեն մետաքս ու թավիշ էին հագնում... Եվ Հայաստանում արդեն սկսվել էր այն երևույթը, որ Եվրոպայում շատ ավելի հետո կատարվեց ու Վերածնունդ անունն ստացավ: Ծնվել էր Նարեկացին և իր ճգնության խցում սկսել էր քննել մարդ արարածի էությունը, իսկ մի այլ հանճարեղ բանաստեղծ, ավելի ճիշտ մի անեցի անանուն գուսան, քաղաքի մեծամեծների ու նրանց շքեղաշունչ տիկնանց հետ պատշգամբում խնջույքի նստած, արդեն երգում էր...

Քանի մարն զիս բերեր, քահանի չեմ խոստովաներ,
Որտեղ քահանա տեսեր, նա ծռեր ճամփան ու ելեր,
Որտեղ մեկ աղվոր տեսեր, գիրկ ու ծոց և ի դեմ գնացեր,
Ծոցիկն եմ ժամտուն արեր, ծծերուն եմ խոստովաներ...

Եվ ավելի, ավելի հեռուներն եմ գնում...

Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, և Հայաստանի աստղը դեռ այն օրերից չթեքվեր, ապա նետողաց վայրի ու շեղաչ ազգը անկարող պիտի լիներ մտնել Հայաստան... Եվ ով գիտե, գուցե այստեղ Լեոնարդոներ ու Ռուբենսներ ծնվեին, շոգու գյուտը այստեղ կատարվեր... Եվ նման շատ ու շատ այլ բաներ...

Բանաստեղծդ մեծափառ, տեսա՞ր ահա, որ արքան ու բանաստեղծը անհամատեղելի են, ոսոխներ են, դու ինչպե՞ս էիր ուզում այդ երկուսը համատեղել թշվառ անձիդ մեջ... Տե՛ղն է քեզ... Դու էլ երևի արդարանաս, թե մեղավորը դու չէիր, այլ Կլեոպատրայի քիթը, որ շատ էր գեղեցիկ... Քիթը քիթ, բայց արքան էլ պիտի արքա լինի...

Տիգրանակերտ. հայոց մայրաքաղաք

➢1 Բայց

$(\alpha x_\beta x_\gamma)(AxBxCxDxExFxKxL)_{\leq 0}$

$|\cos_\gamma|_{\leq 1}$, որտեղ $\alpha x_\beta x_\gamma=1$

և $(A,B,C,D,E,F,K,L) \neq 0$

Հետևաբար, նշված բանաձևերից ստանում ենք

1x(Sxգxրxաxկxեxրxտ)=Տգրակերտ

Հետագայում, բառի սկզբի (ր) տառը գործածության ժամանակ փոխարինվել է կոշտ (ռ)–ով, իսկ (գ) տառն էլ՝ (կ)–ով և դարձել՝

Տկռակերտ:

Մի բան, որն ուզում եմ լրացնել նյութիս մեջ:

Ժամանակին Մովսես Խորենացուն մի քարե արձանագրություն են ներկայացրել և հարցրել, թե ի՞նչ է գրված:

Նա, չկարողանալով կարդալ այդ արձանագրությունը ասել է.

- Ըստ երևույթին մեր ժողովուրդը վաղուց է զբաղվել ծածկագրով:

Հետևաբար, իմ ստուգաբանած տեղանունը ևս մի ծածկագիր է, որն սկզբում արտածել էի թվերի, որից հետո միանգամից գրել տառայինի ձևով: Այնպես որ մեր հայերը, բնականաբար, ընդօրինակել են հույներից դեռ Տիգրան Մեծի ժամանակահատվածից էլ առաջ:

Ասվածից հետևում է, որ բնակատեղը պատկանելիս է եղել հայերին:

Քսենոֆոնը չտեսավ և ոչ մի քաղաք Հայաստանում:

Հետագա զարգացման ընթացքում, մանավանդ Հելլենա-հռոմեական աշխարհի հետ ունեցած շփումների հետևանքով, անհրաժեշտ է դառնում քաղաքային տնտեսությունը, բայց որովհետև հայ ժողովուրդը տնտեսապես զարգացած չէր քաղաքային տարր դառնալու չափ, ուստի հայ թագավորները, Արտաշես և Տիգրան, լցնում էին իրենց մայրաքաղաքները (Արտաշատ և Տիգրանակերտ) օտարազգի ազգաբնակչությամբ, առաջինը՝ մարերով և երկրորդը՝ հույներով և հրեաներով:

Տվյալ նյութից բխեցվում է, որ Տկռակերտը Տիգրանակերտի կրճատ ձևից ստացված տեղանունը հայտնի է դեռ Քսենոֆոնի ժամանակահատվածում:

Լեոն իր «Խոջայական կապիտալի» 276 էջում մեջբերել է Եսայի կաթողիկոսից մի պարբերություն, որտեղ նույնպես հիշատակվում է Տկռակերտ տեղանունը «չուեալ ի Տկռակերտու» ձևով:

Որպես պողպատե կանոն՝ կարելի է օգտագործել Գոթֆրիդ Լայբնիցի խոսքերը.

- Ցանկացած վիճաբանության հարցի լուծման սպառիչ պատասխան կարելի է ստանալ թվերի միջոցով:

Եվ ահա երկարամյա քրտնաջան աշխատանքից հետո՝ 26-րդ տարում՝ 1995 թվին, ինձ հաջողվեց 1895 թվի Պուանկարեի քարտն օգտագործել լայբնիցյան համակարգում, նաև իմ առաջ քաշված $\cos_\vartheta$-ով ու համակարգչային նոր խորհրդանիշով $\forall xA'(x)$ խնդիր հարուցել՝ գտնել տվյալ ունիվերսալ տրամաբանական-մաթեմատիկական մեթոդը, որն արտահայտված է «Չկիրառված գիտություն (Արցախ)» գրքիս մեջ: Այդ դեպքում հենց ներկա նյութիս մեջ օգտագործվում են նույն քայլերը:

1) $\forall xA'(x)$-հիմք են ընդունվում այն պահանջը, որ սիմվոլների հետ գործողություններ կատարելիս միանգամայն անտեսվի նրանց բովանդակությունը, քանի որ սիմվոլների բովանդակության շնորհիվ, տեսության մեջ կարող են ներթափանցել թեև ակնհայտ, բայց տրամաբանորեն չհիմնավորված դրույթներ:

Այստեղից էլ պարզ երևում է, որ նրա սիմվոլներն ամենևին էլ չեն դիտվում իբրև միանգամայն բովանդագուրկ:

2) y=mnconst (տեղանվան բանաձևը)

3) $|K| = |(A)(\otimes)(B)| \not\Leftrightarrow |(A')|$ բառի կառուցվածքը

Կարող է հիմք հանդիսանալ աշխարհի 13 այբուբենի համար համակարգչային համակարգով, միակ ընդհանուր ձևի բառարան կազմելու համար:

4) Համապատասխանաբար տվյալ տեղանքի թվային ծածկագիրը կլինի՝

«0003101602801016050320 31»

«31162811653231»:

Կամ նույնը հակառակ ձևով՝

«31162811653231»

«0003101602801016050320 31»:

5) Տալիս եմ տեղանվան սահմանում.

Տեղանուն, որն անվանակոչվել է ժողովրդի կողմից, որպես թագավոր, հարժեքված Տիգրան անձնանվան, կրճատ ձևից՝ կոչվել է Տկռակերտ:

6) Այնուհետև տեղանվան խմորման սխեման:



Կազմեց
Սերգեյ ՊԵՏՐՈՍՈՎԸ

Վրթանես Փափազյանի նամակը Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությանը

«Գիտությունը» այսօր մեր ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում գրեթե անհայտ մի վավերագիր: Այն հայ նշանավոր գրող Վրթանես Փափազյանի 1920 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությանն ուղարկված նամակն է, որում գրողն առաջարկում է ապրիլի 24-ը սահմանել 1915 թվականի Մեծ Եղեռնի զոհերի ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ:

Չեմ կարծում, որ մոռացված լինեն 1915 թվի 11, 12 և 13-ի (նոր տոմարով՝ 24, 25 և 26) այն օրերը, երբ Կ. Պոլիս և Հայաստանի բոլոր գավառներում, նախապես ծրագրված դիվային մի մտածությունով, թուրք կառավարությունը խմբովին ձերբակալեց հարյուրավոր հայ մտավորականների, տանջեց նրանց բանտից բանտ և աքսորների ճանապարհներին, հետո գազանորեն մորթել տվավ և անհայտության մատնեց նրանց գերեզմաններն անգամ:

Ովքե՞ր ասես, որ չկային այդ նահատակների մեջ: Հայ բանաստեղծ ու լրագրող, բժիշկ ու փաստաբան, հայ ուսուցիչ, եպիսկոպոս, վարդապետ ու քահանա... ամենքի՛ն, ամենքին տարան, ոչինչ չխնայեցին. հայ միտքն ուզեցին մի հարվածով մեռցնել ու ոչնչացնել, ուզեցին ջնջել հայ գիրքը, հայ երգն ու հայ աղոթքը...

Գաղափար կազմելու համար կորստի ահավորության մասին, բավական է հիշատակել, որ սպանվեցին ու մորթվեցին մոտ 760 մտավորականներ:

Յոթը հարյուր և վաթսուն կյանքեր, որոնք այնքան ոգևորությամբ մշակում էին հայ միտքը և որոնց ջնջելով՝ իրավամբ մտածում էին, թե հայ ազգը պիտի կորցնի իր ամենալավ մասը - իր սիրտը, իր կուլտուրան:

Յոթը հարյուր և վաթսուն նահատակներ, որոնք ընկան մեր ազատության ուղիների վրա՝ պատվանդան դառնալով մեր այժմյան փոքրիկ, վտիտ անկախության համար, որ պիտի մեծանա, անշուշտ և լավ օրերի մեջ հիացումով հիշե պիտի իր 760 լավագույն մտավոր ուժերին:

Մեր պատմության մեջ մենք չենք ունեցել նման նահատակներ՝ այդպես խմբովին՝ սրի զոհ գնացած և վայրագորեն ոչնչացրած 1915, ապրիլ 11, 12 և 13 թվեր՝ մեր անցյալի արյունոտ էջերը չունեն արծանագրած իրենց վրա: Յոթը հարյուր և վաթսուն լուսավոր մտքեր միահամուռ ժողոված և անապատների մեջ մորթոտած-լենկթեմուրյան շրջանումն անգամ տեղի չի ունեցել:

Մենք այդ աննախընթաց սոսկումի օրերը ապրեցինք և նրա կսկիծը դեռ մեր սրտերում ունենք դառնորեն: Լայնատարած նախճիրների մեջ՝ խորունկ վշտով է, որ մտաբերում ենք 760 նահատակների անփոխարինելի կորուստը...

Այդ ամենը գիտեմ, որ Հայաստանի խորհրդարանի անդամների հոգու մեջն ևս հարուցանում է կսկծալի հուշեր և մորմոք: Դուք ևս, ամենքդ, մեզ - հայ գրողներիս պես զգում եք վշտի խորությունը, երբ պահ մի աչքի առջև եք բերում, թե ովքե՞ր կորան այդ անիծյալ օրերում և ինչպիսի՞ կյանքեր հնձվեցին:

Դո՛ւք ևս, անշուշտ, կսկիծով համակվում եք, երբ ապրիլ 11-ի, 12-ի և 13-ի օրերին հիշում եք Զոհրապի, Վարուժանի, Սիամանթոյի, Զարդարյանի և այլոց դաժան մահը, երբ մտաբերում եք մեր լավագույն հեղափոխականներից - Վարդգեսի, Խաժակի, Շահրիկյանի և շատ ուրիշների կորուստը:

Ու մտաբերելով կսկիծը ձեր հոգիների մեջ, անշուշտ, դուք, ես հույս ունեմ, չեք մոռանալ հիշեցնելու ամբողջ Հայաստանի ժողովրդին և ամեն տեղերի հայերին, թե ինչպիսի կսկծալից սգո օրեր են ապրիլ 11-ի, 12-ի, 13-ի օրերը և թե ինչպես այդ օրերից մեկ օրը գոնե, անհրաժեշտ է, որ ՍԳՈ ՕՐ դառնա ամբողջ հայ ազգի համար այնպես, ինչպես դարերից ի վեր դարձել է ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՐԸ:

Թույլ տվեք ինձ ուրեմն, հայ ազգի ներկայացուցիչներ, խոնարհաբար անել ձեզ հետևյալ առաջարկները, քաջ գիտենալով, որ դուք պիտի ըստ ամենայնի քաջալերեք նրանց և առաջադրեք գործադրելու:

1. Ապրիլի 12-ի կամ 13-ի օրը հռչակել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԳԻ ՕՐ, կանգ առնել տալ ամեն հաստատություն իր գործունեության մեջ, փակել բոլոր խանութները և կազմակերպել տալ ամեն տեղ, մանավանդ կրթական հաստատությունների մեջ՝ սգահանդեսներ, ուր մատաղ սերունդը լսի և իմանա, թե ինչպիսի զոհերի գնով է, որ վայելում է այժմյան իր ազատությունը և ովքեր են այն նահատակներ, որոնք իրենց վարդագույն արյունովը պսակեցին մեր անկախությունը:

2. Օրինագիծ մտցնել Պառլամենտում՝ ամեն տարի որոշ օր նշելու մեր այդ նահատակների հիշատակը և առաջարկել Վեհափառ կաթողիկոսին, որ հայ բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարվեն, իսկ օրացույցի մեջ Ապրիլի 12-ի օրը նշանակվի իբր մշտական սգո օր՝ «Հիշատակ հայ նահատակների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թուրքական վայրագ սրից»:

Մեծահույս եմ, որ Հայաստանի Պառլամենտը կատարելապես իր սրտին և զգացմունքներին համապատասխան գտնելով իմ այդ առաջարկները, կանի պատշաճ տնօրինությունը վաղօրոք՝ ի գիտություն ամենքի:

Ամենայն հարգանքով՝ հայ գրող
ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ
1920 թ. ապրիլի 3
Վաղարշապատ

Արցախի հարցում համահայկական հայեցակարգ է անհրաժեշտ

Ինչպես պահպանել փրկված Արցախը, որոնք են այն գործոնները, որոնց նկատմամբ պետք է ունենալ համահայկական միասնական տեսակետներ՝ անկախ բնակավայրից, քաղաքական նկրտումից, սոցիալական վիճակից և նույնիսկ տարիքից:

Այսպիսով, անկախ ապրելակերպից, մեծ ու փոքրից, աղքատ ու հարուստից, պաշտոնյայից թե սովորական քաղաքացուց, անկախ կրթության մակարդակից. սոցիալական ծագումից, առողջական վիճակից, մի խոսքով, անկախ ամեն ինչից պատմական ներկա հորձանուտում դրված է հայ ազգի «լինել, թե չլինել» համազգային խնդիրը: Այդ խնդրի լուծման բանալին գտնվում է ազատ, անկախ Արցախի գոյության մեջ: Ուստի Արցախին վերաբերող յուրաքանչյուր բախտորոշ որոշում պետք է ընդունելի լինի ամբողջ հայ ժողովրդի հանրաքվեով կամ համաձայնությամբ ՀՀ-ում, Արցախում և Սփյուռքի գաղթօջախներում, քանի որ ներկա ազատագրված տարածքները ձեռք են բերվել հայ ժողովրդի բոլոր հատվածների զոհաբերությունների և մաքառումների շնորհիվ:

Ոչ մի պաշտոնյա, կուսակցություն, կոալիցիա, քաղաքական և հասարակական գործիչ իրավունք չունի սեփականաշնորհելու հայրենասիրությունը և հանդես գալու ամբողջ հայ ժողովրդի անունից ու կայացնելու բախտորոշ որոշումներ:

Արցախի խնդրում պետք է ձևավորել համազգային տեսակետներ, որոնք պետք է արտահայտեն հայ ժողովրդի հավաքական կամքը, հաստատված պատմական անցյալով, միջազգային օրենքներով, իրական իրադրությամբ և ամբողջ հայության համաձայնությամբ:

Օրենքի ուժ ունեցող համահայկական միասնական տեսակետի բնորոշումը պետք է ձևավորել պատմական շատ բացահայտ փաստերի իրողության մեջ. ընդգրկելով 1915 թ. մեծ եղեռնը և դրանից առաջ ու հետո բազմիցս իրականացված եղեռնագործությունները:

Հայաստանը և Արցախը ավելի քան 17 տարի գտնվում են շրջափակման մեջ. կրելով անասելի դժվարություններ, նյութական և բարոյական զրկանքներ: Սակայն, հայ ժողովուրդն իր մեջ գտել է ուժ՝ համայն հայության օգնությամբ ազատագրել Արցախի մի մասն ու մի շարք հարակից պատմական Հայաստանի տարածքները, որոնք այժմ սխալմամբ ստացել են ստրատեգիական անվանում «անվտանգության գոտի»: Միթե այդ «գոտին» իր ակունքում հայկական բնաշխարհի մի մասնիկը չէ: Ըստ մեզ՝ բանակցային գործընթացներում խոսքը պետք է գնա նախկինում և ներկայում բռնազավթված տարածքների, Հյուսիսային Շահումյանի և Բերդաշենի շտապ ազատագրման մասին: Բանակցային դաշտում հայկական կողմը պետք է լինի պահանջատերը և ոչ թե զիջող կողմը:

Ներկայումս, Հյուսիսային Շահումյանը և Բերդաշենն Ադրբեջանի պետական ծրագրով շտապ, արտոնյալ պայմաններով, վերաբնակեցվում են ադրբեջանցիներով, ինչը միջազգային օրենքներով ոճրագործություն է: Ազերը, աչքի առաջ ունենալով Նախիջևանի հայաթափման անպատիժ իրողությունը, հայկական եկեղեցիների, քաղաքների, խաչքարերի և գերեզմանների ավերումը, խճաքարի վերածումն ու հրաձգարանների կառուցումն արդեն մեր օրերում քաջալերվում են և մղվում բանակցային դաշտում հանդուգն պահանջատիրության:

Ադրբեջանն իր քաղաքականությունը կառուցում է «մեծ եղբոր»՝ Թուրքիայի, հովանավորությամբ և նշանակումով: Սակայն ինչպիսի անմարդկային բնորոշման է արժանի այն պետական համակարգը, որն իրականացնելով 1.5 մլն անմեղ, անզեն մարդկանց ոչնչացումը, տարածքների և ունեցվածքի բռնագավթումը ոչ հեռավոր անցյալում, այժմ էլ իրագործում է 17 տարի տևող շրջափակում և նախապայմաններ դնում շրջափակումը վերացնելու հարցում: Այս ամենի տարօրինակ զուգաթակետ կարող է համարվել քնած, խաղաղ ուսանող, հայ մարտիկ Գուրգեն Մարգարյանի կացնահարումը Բուդապեշտում և հանցագործությունը կատարած ստահակի մեծարումը «տարվա մարդ» անվանակոչությամբ, այն էլ առաջարկված մարդու իրավունքների կին պաշտպանի կողմից: Այս աղաղակող փաստերի իրողության մեջ. ինչքան բարձր պետք է լինի հայ մարդու բարոյական մակարդակը, որը կոչ չի անում օրենքով համազգային ատելություն դրսևորել ներկա ադրբեջանական և թուրքական իշխանությունների նկատմամբ, մինչև նրանց կողմից եղեռնի ճանաչումը և զղջման իրողության ընդունումը:

Աշխարհի տարբեր պետությունների կողմից եղեռնի ընդունումը շատ կարևոր է մեր երկրի համար որպես միջազգային վանդալիզմից տուժած ժողովրդի, որը չվհատվելով կառուցում է իր ազատ և անկախ երկիրը: Այնուհանդերձ, կարծում եմ, որ միջազգային կառույցների դերը շատ մեծ է Թուրքիային և Ադրբեջանին հասկացնելու, որ նրանց որդեգրած փաստերը կեղծելու, ուրացության և վանդալիզմի քաղաքականությունը կարող են բերել հենց իրենց իսկ մեկուսացմանը, որպես ոճրագործությունն ուրացող պետական քաղաքականություն իրագործող երկիր:

Հայ ժողովուրդն անցել է այդ դառը փորձությունը և մնացել բարի, ստեղծագործ և հյուրասեր: Սակայն աշխարհի շատ ժողովուրդներ, անծանոթ լինելով եղեռնի այդ անմարդկային դաժանություններին, չեն էլ կարող պատկերացնել, թե ինչպես պետական ուժ ստացած ոհմակը, որի գաղափարախոսությունը տեղավորվում է մի քանի բառի մեջ՝ «սպանիր, ջարդի՛ր, անարգի՛ր և տիրացի՛ր» կարգախոսով, հանկարծ մի օր կարող է վերաբերվել հենց իրենց: Ուստի, պայքարը եղեռնագործության դեմ պետք է լինի համամարդկային և այն իրագործած երկիրը պետք է ներողություն խնդրի ամբողջ աշխարհից և հայ ժողովրդից իր բոլոր իրավաբանական հետևանքներով:

Ուստի բանակցային դաշտում համահայկական տեսակետը պետք է խարսխվի ըմբռնումով այն մասին, որ մենք *պահանջատեր* ենք՝ համաձայն պատմական անհերքելի փաստերի և ներկա, իրական իրադրության:

Հայաստանի և Արցախի անձեռնմխելիության, իր էքնիկ տարածքի, բազմադարյան մշակույթի և կորցրած հարստությունների վերականգնման գործում չափազանց մեծ դեր ունի հայ մտավորականությունը, որի ջանքերը չի կարելի գնահատել բավարար: Ներկա իրադրությունը դժվար է բացատրել միայն կենցաղային ծանր իրավիճակով և պետության անբավարար հոգածությամբ: Կան ազգային խնդիրներ, որոնք վեր են ամեն տեսակի դժվարություններից, և մեր ժողովուրդը հարատևել է հենց այդ սկզբունքով:

Բնականաբար, մեր հայրենակիցներն ավելի շատ և տարբեր լեզուներով պետք է հրատարակեն մեր անցյալի և ներկայի իրողությունը, կինոյի, թատրոնի, հեռուստատեսության, ինտերնետային կայքերի, սեմինարների, ցուցահանդեսների, թերթերի, կլոր սեղանների, համաժողովների, գիտաժողովների և այլ հնարավոր միջոցներով պետք է միջազգային հանրությանը ներկայացնեն թուրքերի ոճրագործություններն անցյալում և ներկա պայմաններում նպատակ ունենալով դրսևորել ոչ թե հայի թշվառական վիճակն, այլ նրա հաղթող անկոտրում կամքը, որպես համաշխարհային մշակույթի մաս: Սրանով կձևավորվի այն մթնոլորտը, որով միջազգային հանրությունը կճանաչի նաև Արցախի ինքնիշխան պետությունը:

(Շարունակելի)

Միքայել ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ և ԼՂՀ գիտատեխնիկական զարգացման հանձնաժողովի համանախագահ,
ՌԴ բնական գիտ. ակադեմիայի ակադեմիկոս

ՆՈՐ ԳԻՐՔ ՄԵԾԱՀԱՄԲԱՎ ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

«Մարշալ Բաղրամյանը և թիկունքի աշխատանքը»

Մոսկվայում վերջերս հրատարակվել է անվանի գրող Վլադիմիր Կարպովի գիրքը՝ Մարշալ Հովհաննես Բաղրամյանի՝ ԽՍՀՄ Պաշտպանության նախարարի տեղակալի՝ թիկունքի պետի պաշտոնում՝ գործունեության մասին:

Մեծահամբավ զորավարի գործունեության այդ բնագավառը ուսումնասիրված չէ, և հեղինակի նպատակն է եղել վերացնել այդ պակասը: Հ. Բաղրամյանի այդ նշանակումը համընկավ հետպատերազմյան շրջանին, երբ երբեմնի դաշնակից պետությունների միջև հարաբերությունները խիստ վատացան, հատկապես Ֆուլտոնում ունեցած Ուինստոն Չերչիլի հակասովետական ելույթով. դա Խորհրդային Միության դեմ խաչակրաց պատերազմ հայտարարելու կոչ էր: Աշխարհը հայտնվեց համաշխարհային պատերազմի սարսափելի վտանգի առջև: Միջուկային զենքի

գործադրումը դառնում էր անխուսափելի:

Այդ պայմաններում բանակի թիկունքի աշխատանքները բացառիկ նշանակություն էին ձեռք բերում: Դրանք պետք է ղեկավարեր ոչ միայն երկրի լավագույն համբարակը (ինդենտանտ), այլ փորձված զորավար:

Երկրի ղեկավարությունը այդ կարևոր բնագավառը վստահեց Խորհրդային Միության Մարշալ Հովհաննես Բաղրամյանին, և նա նշանակվեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ-թիկունքի պետ: Այս պաշտոնում նա աշխատեց տաս տարի (1955-1968 թթ.):

Գրքի հեղինակը քաջատեղյակ էր Հ. Բաղրամյանի պատերազմական տարիների և խաղաղ ժամանակների գործունեությանը, պատերազմի ժամանակ ծառայել էր Մերձբալթյան 1-ին ռազմաճակատում, իսկ հետպատերազմյան տարիներին ջերմ կապեր ուներ փառաբանված Մարշալի հետ:

Ընթերցողին հղված գրքի առաջաբանում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը գրում է. «Խորհրդային Միության Մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը իրավացիորեն արժանի տեղ է գրավում հայրենական զորահրամանատարների և ռազմական գործի տեսաբանների շարքում»:

Քաղաքացիական և Հայրենական մեծ պատերազմի մասնակից, երկու ակադեմիաների շրջանավարտ Հ. Ք. Բաղրամյանը անցել է ոչ դյուրին մարտական ճանապարհ՝ գնդի հետախուզության պետից մինչև Մերձբալթյան առաջին և Բելոռուսական երրորդ ռազմաճակատների զորահրամանատար:

Լայն հասարակայնությանը քիչ է հայտնի պաշտպանության նախարարի տեղակալի-թիկունքի պետի՝ Հ. Բաղրամյանի տաս տարիների գործունեությունը: Իսկ այդ պաշտոնում նա հսկայական ներդրում ունեցավ պետության պաշտպանության հզորության ամրապնդման գործում: Նրա ղեկավարությամբ վերականգնվեցին զինված ուժերի թիկունքային ապահովման կենտրոնացված համակարգը, զորահրամանատարների և հրամանատարների թիկունքի գծով տեղակալների ինստիտուտը, կատարելագործվեցին թիկունքի ծառայությունները, համակարգային բնույթ ստացան թիկունքային ռազմական գործընթացները, հատկապես օպերատիվ ռեզերվներ ստեղծելու տեսակետից, մշակվեցին նոր մարտական կանոնադրություններ և հրահանգներ թիկունքային ծառայությունների համար:

«Համոզված եմ,- շարունակում է Սերգեյ Իվանովը,- Մարշալ Բաղրամյանի՝ իսկական հայրենասերի, տաղանդավոր զորահրամանատարի և հասարակական գործչի մասին գիրքը կենդանի արձագանք կունենա հազարավոր երախտագետ ընթերցողների մոտ, նախ և առաջ բոլոր զինծառայողների, որոնք նոր պետք է մտնեն բանակի շարքերը և, անկասկած, կհարստացնեն իրենց գրադարանները ռազմա-հայրենասիրական հրապարակումներով»:

Գիրքը սկսվում է Մարշալ Հ. Բաղրամյանի մասին կենսագրական տեղեկություններով, այնուհետև անցյալ դարի 50-60-ական թվականներին, ինչպես երկրում, այնպես էլ միջազգային ասպարեզում այնքան հագեցված իրադարձությունների շարադրմամբ, որոնց, հիմնականում, ծանոթ չեն այսօրվա սերունդները: Հեղինակը կանգ է առնում Հ. Բաղրամյանի հետպատերազմյան կյանքի և գործունեության՝ Զորահրամանատարի, Գլխավոր շտաբի Գլխավոր ինսպեկտորի, ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալի, Գլխավոր շտաբի ակադեմիայի պետի պաշտոններում կատարած գործունեության մասին հետաքրքիր տվյալներով և նրան տված բարձր գնահատականներով, որոնց մասին խոսելը շատ տեղ կգրավեր: Նշենք միայն, որ այստեղ հիշեցվում է նաև 1941 թ. Ռոստովի ազատագրման մարտերի մասին, ինչը տեղի ունեցավ Հ. Բաղրամյանի մտահղացմամբ, հակառակ գլխավոր շտաբի դիրքորոշման: 1941 թ. նոյեմբերին իրականացրած այդ հակահարձակման շնորհիվ ազատարգվեցին Ռոստովից մինչև Տագանրոգ և Միուս գետը ընկած տարածքները: Այդ նույն թվականի նոյեմբերի 29-ին ազատագրվեց Դոնի Ռոստովը: Այդ առթիվ ասված է, որ դա «սովետական զորքերի ստրատեգիական առաջին հաջող հարձակումն էր ստրատեգիական պաշտպանության սահմաններում, որի արդյունքները անգնահատելի նշանակություն ունեցան Մոսկվայի մոտ տարած հաղթանակում»:

Դաշնակիցների միջև հարաբերությունների վատթարացման հետևանքով հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ի կողմից Խորհրդային Միության ռազմական օբյեկտները, բազմաթիվ քաղաքներ վերցված են ատոմային զենքի նշանառության տակ: Այդ պայմաններում թիկունքի, ինչպես և թիկունքային զորքերի դերը բացառիկ նշանակություն էին ստանում:

Թիկունքի նոր պետը իր աշխատանքի ոճին վայել պատասխանատվությամբ, հանգամանորեն, կարճ ժամանակում վճռականորեն բարելավեց թիկունքային աշխատանքների բարդ համակարգը, որը դարձրեց դինամիկ, ճկուն, արդյունավետ:

Պահպանվեց Հայրենական Մեծ պատերազմում ընդունված զորքերի նյութական մատակարարման և ապահովման կարգը՝ կենտրոն-ռազմաճակատ-բանակ-միավորում-զորամաս-ստորաբաժանում:

Հ. Բաղրամյանը հայտնի էր ամենադժվարին պատերազմական պայմաններում ընդունելու ինքնատիպ որոշումներ, որոնք չէին նախատեսված ոչ մի դոկտրինայով և կանոնադրություններով: Մեծ զորավարին բնութագրող այդ կողմերը նա պահպանեց և թիկունքային աշխատանքներում:

Հայտնի է, որ կուսակցության գլխավոր քարտուղար Խրուշչովը, 1960 թ. կուսակցության 20-րդ համագումարի անունից հայտարարեց բանակի կրճատման մասին: Բանակում ծառայողների մեծ մասը գիտակցում էր նման որոշման վտանգավորությունը, բայց ոչինչ չէին կարող անել: Այդ որոշումը հատկապես վտանգավոր էր թիկունքային աշխատողների համատարած կրճատումների առումով: Գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ «ցանկացած սպա կարող է լուծել թիկունքային հարցերը, նրանցից ցանկացածը կարող է հանդերձանք բաժանել և հաշվել փողերը»: Հ. Բաղրամյանը գիտակցում էր այդ ակտի վտանգավորությունը, մանավանդ կրճատման տակ ընկած ռազմական ուսումնարանների հետևանքով:

Այդպիսի պայմաններում դժվար թե մեկը հանդգներ որևէ քայլի դիմել, բայց Հ. Բաղրամյանը ասաց. «Կենտկոմի որոշման և Խրուշչովի հայտարարության մեջ խոսվում է բանակի և ուսումնարանների կրճատման մասին, բայց ոչինչ չի ասված նոր ուսումնարանների ստեղծման մասին»: Հ. Բաղրամյանը դիմում է ռիսկի, որոշում է ստեղծել երկու նոր ուսումնարան՝ թիկունքային մասնագետներ պատրաստելու, ինչը և ապահովեց զորամասերի թիկունքային աշխատողների պահանջը:

Հ. Բաղրամյանն արդեն 61 տարեկան էր, երբ նշանակեցին այդ պաշտոնին, ու չնայած առողջության վատթարացմանը նա համաձայնվեց ստանձնել այդ ծանր պատասխանատվությունը: Մինչդեռ թիկունքի աշխատանքները ձախողված էին, զորքերը ուղղակի շնչահեղձ էին լինում թիկունքի աշխատանքների վատ դրվածքի հետևանքով՝ նյութական, տեխնիկական, տնտեսական միջոցների սղության պատճառով:

Հայտնի է, թե պատերազմը ինչպիսի մեծածավալ վնասներ հասցրեց տնտեսությանը, երկիրը ապրում էր վերականգնման աշխատանքներով, տեխնիկական միջոցների հերթափոխությամբ: Միայն համակողմանի գիտելիքների, կազմակերպչական մեծ կարողությունների և անկոտրում կամքի տեր մարդը կարող էր շտկել վիճակը:

Թիկունքի վետերան, գեներալ-գնդապետ Ի. Գոլուշկոյի վկայությամբ Բաղրամյանի նշանակումը Զինված ուժերի թիկունքի պետի պաշտոնում՝ համընկավ այն իրողությանը, որ երկրի բոլոր հնարավոր պաշարները գնում էին հրթիռային միջուկային զենքերի ստեղծման արտադրությանը և դրանցով զորքերի սպառազինելուն:

Այդ ամենը տեղի էր ունենում Կարիբյան ճգնաժամի պայմաններում: Միայն Մարշալ Հ. Բաղրամյանի անձնական եռանդի և երկրում ունեցած բարձր հեղինակության շնորհիվ վերակառուցվեց թիկունքի ապահովումը, զորքերի հրթիռա-միջուկային սպառազինումը, դրա գործադրման բոլոր պահանջվող միջոցներով:

Արդեն ասվեց, որ Հ. Բաղրամյանի նշանակումը թիկունքի պետի պաշտոնում համընկավ սառը պատերազմի տարիների հետ: 1962 թ. Կուբա տեղափոխվեցին միջին հեռավորության բալիստիկ հրթիռներ, ռազմաճակատային թևավոր հրթիռային, հրաձգային, զենիթային, ռազմածովային զորամասեր, ավելի քան 50 հազարից ավելի զինվորականներ՝ քաղաքացիական համազգեստներով, 300 հազարից ավելի բեռներ: Այդ բոլորը կատարվում էր գաղտնի, ծովով, ավելի քան 10 հազար կիլոմետր ճանապարհով, առանց մատակարարումների և վերանորոգումների որևէ միջանկյալ կայանի:

Դրանից հետո Հ. Բաղրամյանի ուսերին ընկան նոր, նույնքան ծանր խնդիրներ: ԱՄՆ-ի պահանջով զորքերը և տեխնիկական միջոցները պետք է վերադարձվեին:

Գրքում զգալի տեղ է հատկացված Բաղրամյանի հանդիպումներին՝ արվեստի, գրականության գործիչների հետ, նրանց միջև եղած ջերմ հարաբերություններին:

Գիրքը ավարտվում է Ռուսաստանի Դաշնության Զինված Ուժերի թիկունքի պետ, գեներալ Վ. Ի. Իսակովի կողմից Հ. Բաղրամյանի գործունեության մասին տված գնահատականներով.

- Իվան Քրիստափորովիչ Բաղրամյանի, որպես տաղանդավոր կազմակերպչի և ղեկավարի՝ պետության բարդ ու դժվարին կազմակերպության-զինված ուժերի թիկունքի պետի գործունեությունը, դեռևս լիովին չի ուսումնասիրված ռազմական պատմաբանների կողմից և չի արտացոլված պատմական-հուշագրական և գեղարվեստական գրականության մեջ: Լինելով ԽՍՀՄ-ի զինված ուժերի նախարարի տեղակալ-թիկունքի պետ, տաս տարիների ընթացքում Խորհրդային Միության Մարշալ Բաղրամյանը կարողացավ հասնել թիկունքի կենտրոնացված համակարգը կազմակերպելուն: Նրա ղեկավարությամբ Զինված Ուժերի թիկունքը շարունակեց զարգանալ, միաժամանակ կատարելագործելով պետական էկոնոմիկայի զինված պայքարի միջոցները և եղանակները: Զինված ուժերի հագեցվածությունը միջուկային զենքով, սովորական ավանդական զենքերի հետագա կատարելագործումը և թիկունքի կառուցվածքի կազմակերպումը ավելի լիովին, «նեգրավվեցին» զինված ուժերի կառուցվածքում: Զևակերպվեցին և հստակվեցին պաշտպանության, ռազմա-ծովային նավատորմի հրթիռային զորքերի թիկունքի կառուցվածքները, վերակազմվեցին թիկունքի կանոնադրական փաստաթղթերը և միջոցների կիրառումը զորքերի և օպերատիվ թիկունքի կողմից...

Հ. Ք. Բաղրամյանի ղեկավարությամբ հատկապես ստեղծված թիկունքի կառուցվածքները, ռեզերվները ապահովվեցին հուսալի այն պաշարներով, որոնք հնարավորություն են տվել և տալիս կատարելագործել այն ամենը, ինչը մշտապես կհամապատասխանի ժամանակի պահանջներին՝ ինչպես ամենօրյա ուսուցման մարտական գործունեությունում, այնպես էլ մարտական և արտակարգ իրավիճակներում:

Հրանտ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի պատերազմի և ՀՈՒ վետերանների կոմիտեի նախագահ



ՍԻՐԵԼ ԸՆՏՐԱԾ ԳՈՐԾԸ

«Կյանքում միշտ մեկը գալիս է փոխարինելու մյուսին: Երջանիկ է նա, ով գալիս է փոխարինելու ազնիվ, գիտակ ու բարոյական մարդու»...

Այս խոսքերը պատկանում են բժիշկ-ակնաբույժ Մանուկ Մանուկյանին: Ծնվել է Հունաստանի մի փոքրիկ քաղաքում՝ Քոմոթինում 1937 թվականին: Նա ընտանիքի վերջին՝ հինգերորդ զավակն էր, իսկ նրա ծնողները՝ տարիքը առած: Հայրը 66 տարեկան էր, իսկ մայրը՝ 52: Այնպես որ փոքրիկ Մանուկը որբացավ, երբ դեռ ինը տարեկան էր:

1947 թվականին Մանուկ Մանուկյանը իր ծեր հորաքրոջ հետ հայրենադարձվում է Հայաստան և... 10 տարեկանից մինչև 30 տարեկանը իր ապրուստի միջոցները հայթայթում է տեքստիլագործությամբ: Գործել ու վաճառել է իր անքուն գիշերների ստեղծածը, իսկ ցերեկը սովորել ու սովորել է...

Եվ այսպես: Ավարտել է միջնակարգ դպրոցը, բժշկական ուսումնարանը, բժշկական ինստիտուտը՝ ապա՝ ասպիրանտուրան: Այս դժվարին ու անքուն գիշերների տարիներն իրենց արդյունքը տվեցին. նա բժշկական գիտությունների թեկնածու է, ավելի քան 30 գյուտերի, գիտական բազմաթիվ հոդվածների, նորարական առաջարկությունների հեղինակ, միջազգային կարգի ակնաբույժ: 2004 թվականին նրան շնորհվեց էկոլոգիայի և կենսագործունեության Անվտանգության Միջազգային Ակադեմիայի ակադեմիկոսի պատվավոր կոչում:

1988 թվականին Մանուկ Մանուկյանը դարձավ Հայաստանում առաջին մասնավոր կլինիկայի տնօրենը:

Խոսքաշեն ու մարդամոտ, 70-ին մոտ այդ ճերմակահեր մարդը այսօր դեռ առույգ է, լի գիտական գործունեության նորանոր նպատակներով:

Նրա վիրահատարանի դռան ճակատին գրված է իր իսկ ասույթներից մեկը. «Կյանքը երազ է, որ մարդ տեսնում է արթուն՝ բաց աչքերով...»:

Երբ բարեկամների շրջապատում պատահաբար հայտնված մեկը հարցնում է, թե ինչու որոշեց ակնաբույժ դառնալ, նա կես-լուրջ, կեսկատակ պատասխանում է՝

- Ընկեր Նուրիջանյանի աչքերը վիրահատելու համար...

«Ընկեր Նուրիջանյանը» իր դասղեկն էր, որ նրանց տանը տեսնելով գործող դազգահը, Մանուկի սևացած

ձեռքերն ու անքնությունից ուռած ու կարմրած աչքերը, և լսելով ծեր հորաքրոջ բացատրությունը, թե՝

- Աս մեքենայի վրա Մանուկս կաշխատի ու մեզ կպահի,- լաց էր եղել...

Արդյոք նրա մտքով կանցնե՞ր, որ տարիներ անց այդ աշակերտը վիրահատելու է նրան, և օգնելու է վերականգնելու կուրացած աչքերի տեսողությունը...

Ակնաբույժ դառնալու որոշումը ամրապնդվեց բժշկական ինստիտուտի ավարտման տարին: Աշխատանքից հետո վազում էր գրադարան, կարդում բժշկական գրականություն, գրում էր ու տպագրվում ակնաբուժական հանդեսներում:

- Դժվար է ակնաբուժական կլինիկայի տնօրենի պարտականությունը,- երբեմն իր անմիջական բնավորությանը տուրք տալով, անկեղծանում է նա,- բուհն ավարտելուց հետո աշխատեցի Վարդենիսի շրջանում, հետո՝ 2 տարի անգործ էի: 74-78 թվականներին Ներքին Խաթունարխի փոքրիկ հիվանդանոցում էի աշխատում:

Հետո «Խաթունարխի բժիշկը» հանրապետական հիվանդանոցի նկուղային հարկում աչքի պրոթեզներ էր վաճառում, իսկ ավելի հետո՝ հարյուրավոր վիրահատություններ կատարած ակնաբույժը կես դրույքով աշխատանք ստացավ:

- 10 տարի աշխատել եմ 3 տարբեր հիվանդանոցներում: Ուժահատվել էի: 1988 թվականին թողեցի բոլոր պետական հիվանդանոցներն ու դարձա Հայաստանում առաջին՝ սեփական կլինիկայի հիմնադիրը,- պատմում է նա, ու շարունակում.

- Ինձ ազատություն էր պետք, ես պատրաստ էի թռիչքի: Գիտեի, որ կարող եմ անդուլ աշխատել:

Իսկապես, կարծես նա իր հոգու աչքերով տեսնում ու զգում էր, թե ինչպե՞ս պետք է բուժել, ինչպե՞ս վիրահատել և ամբողջովին նվիրվել աշխատանքին:

- Այո, ես ուրախ եմ իմ ստեղծածով, ահա՛ իմ կլինիկան, որի ամեն քարն իմ ձեռքով եմ դրել և դրա համար չեմ ամաչում, այլ հպարտանում եմ: Մասնավոր կլինիկան ստիպված է ինքն իր բոլոր կարիքները հոգալ: Իսկ ես չեմ կարող միակ բժշկի պատասխանատվությունն ուրիշի ուսերին դնել:

Մանուկյան-ակնաբույժը տարվա ընթացքում 1000-ից ավելի վիրահատություն է կատարում, մարդիկ գալիս-գտնում են նրան, և նա աշխատում է շատ, աշխատում է սիրով: Պատրաստել է անգլերեն լեզվով գիտական հոդվածների ժողովածու: Նրա վիրահատության ու բուժման մեթոդների մասին գիտավավերագրական ֆիլմը ցուցադրվել է բազմաթիվ երկրներում: Գիշերները, երբ թվում է, թե կարող է հանգստանալ, նստում է գրասեղանի առաջ, նա անդադար աշխատում է, անդադար մտածում, որը նրա էությունն է: «Աստծո պատվիրաններն ու բնության գաղտնիքները» գիրքը արժանացել է Սայաթ-Նովայի անվան շքանշանին, իսկ՝ «Վիրաբույժի կյանքը նպատակաուղղված և անվերջ պայքար է» բնաբանով «Իմ կյանքը» գրքույկում հեղինակ Մանուկ Մանուկյանը պարզ ու անմիջական լեզվով ներկայացնում է իր կյանքի պատմությունը:

Այսօր Մանուկյան-ակնաբույժի կես ժամվա հաջող վիրահատությունը 30 տարվա տքնաջան, անդուլ աշխատանքի արդյունք է: Զարմանալի կենսախինդ մարդը, որը ունի չորս զավակ, նվագում է... շրթնահարմոն, հրապուրվում անալիտիկի փիլիսոփայությամբ, գրում բազմաթիվ ասույթներ, և համոզված է, որ՝ «Մարդը առօրյա իր ապրելակերպով, վրդովմունքներով, կյանքի անախորժություններով, պոռթկումներով, հոգվո հանգստությամբ հիշեցնում է բնությունը: Երկինքը մթագնում է, ճեղքվում կայծակի փայլատակումներից, փոթորկվում է ծովը, մոլեգնում է հողմը, և մի պահ թվում է, թե եկել է աշխարհի վերջը, և միայն մարգարեությունը կօգնի գուշակելու և հասկանալու, որ այդ ամենը անցողիկ-ժամանակավոր է, որ շուտով անամպ երկինք կլինի, հողմը կհանդարտվի, ծովը կխաղաղվի և գեղեցիկ ելևէջներով կավետվի կյանքի հավերժությունը...

Եվ՝ «Ապրել նշանակում է անընդմեջ ստեղծագործել և որևէ բեղմնավոր աշխատանքով զբաղվել: Անբան մարդը ոչ թե ապրում է, այլ գոյատևում է վեգետատիվ՝ անասնական կյանքով»:

Վիրաբույժի կյանքը նպատակաուղղված և անվերջ պայքար է...

Ջ. ՉԱՏԻՆՅԱՆ

Թոքախտը չքավորների հիվանդություն է

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, աշխարհի բնակչության 1,7 միլիարդ մարդ «միկոբակտերիում տուբերկուլոզի» բացիլակիր է: Յուրաքանչյուր տարի 8 միլիոն հիվանդներից 3 միլիոնը մահանում են: Չինաստանում բնակչության 18 %-ը վարակակիրներ են, Հնդկաստանում՝ 30, իսկ Աֆրիկայում՝ 18:

Շատ կարևոր է վաղ շրջանում հիվանդության հայտնաբերումը: Եթե նկատվում է հանկարծակի դող, բարձր ջերմություն, ընդհանուր թուլություն, գլխացավ, հազ և արտադրություն, պետք է անմիջապես դիմել բժշկի: Այդ ընթացքում հիվանդությունը բուժվում է անտիբիոտիկներով:

Ընդհանրապես թոքային հիվանդությունները բուժելու համար բժշկական-դեղորայքային բուժումից բացի, առաջնահերթ պայմաններից մեկն էլ լիարժեք սնունդն է: Ուսումնասիրելով թոքախտի տարածման աշխարհագրությունը ակնհայտ է դառնում, որ նրա հիմնական պատճառը թերսնումն է, աղքատությունը:

Իսկ սոցիալապես անապահով շրջաններում պայքարը հիվանդության դեմ առավել է դժվարանում տարրական հիգիենայի պայմանների բացակայության պատճառով: Ահա թե ինչու, առողջապահական, ինչպես նաև միջազգային-հումանիտար կազմակերպությունների ջանքերը ուղղված են աղքատության դեմ պայքարին:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ Է ՊԵՏՔ

Միկրոբները հաղթում են դեղագործներին

Ամերիկացիների կեսից ավելին հիվանդանալիս, առանց խտրականության, խմում են անտիբիոտիկներ: Մինչդեռ միշտ չէ, որ դա անհրաժեշտ է: Օրինակ, բրոնխիտի ժամանակ անտիբիոտիկներ պետք է ընդունեն հիվանդների 10 տոկոսը միայն, մինչդեռ բոլոր հիվանդներն անխտիր բոերով խմում են այդ անտիբիոտիկները: Այս հետևությանն են հանգել Ջորջիայի բժշկական համալսարանի հետազոտողները: Անտիբիոտիկների զանգվածային կլանումը մեծացնում է հիվանդածին միկրոբների հարմարվողականությունը այդ հակաբիոտիկներին: Սովորաբար հիվանդությունների հարուցիչների շտամները, որոնց վրա այլևս չեն ազդում նոր անտիբիոտիկները, հայտնվում են դրանց կիրառումից ընդամենը երկու տարի հետ: Հետազոտության հեղինակները կանխատեսում են, որ արդեն 50 տարի հետո բազմաթիվ անտիբիոտիկներ, որոնք օգտագործվում են մինինգիտի, թոքաբորբի, թոքախտի և բազում այլ հիվանդությունների ժամանակ, կդառնան բացարձակապես անօգուտ:

Դիետիկ սննդի առասպելը

Փենսիլվանիայի համալսարանի գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Միացյալ Նահանգներում մեծ հռչակ ձեռք բերած 10 հայտնի ծրագրերը, որոնք իբր նախատեսված են արագ և արդյունավետ նիհարելու համար, ընդամենը խոստումներ են և ոչ ավելին: Ինչպես պարզվել է, այդ ծրագրերով սնվողներից միայն հինգ տոկոսին է հաջողվում նիհարել և այն էլ ժամանակավորապես: Եթե անգամ դիետիկ սննդով մարդը կարողացել է ազատվել ավելորդ կիլոգրամներից, մի քանի ամսից կամ առավելագույնը մեկ տարուց հետո վերադառնում է նույն վիճակին: Արդյունքում մարդուն ժառանգություն են մնում դիետիկ սննդով ապրելու տառապանքները, զրկանքները, իսկ եթե բախտը չի բերում՝ նաև մի քանի հիվանդություններ:

Վնասակար ուտելիքների շքերթը

Պրոֆեսոր Ջոնսի (Բոուդենը ի լուր Ամերիկայի հրապարակել է սննդամթերքների այն ցանկը, որոնց ընդունումը բացասաբար է անդրադառնում մարդու առողջության վրա: Վնասակարության ցուցանիշներով նա չեմպիոնի պատվանդանը հատկացրել է «ալ յա» ֆրանսիական տապակած կարտոֆիլին (որը հրամցվում է արագ սննդի ցանցի գրեթե բոլոր ռեստորաններում): Սույն սննդատեսակը պարունակում է կարտոֆիլի, յուղի, շաքարի, արհեստական համեմունքների մի ամբողջ թունավոր փունջ: Վնասակար սննդատեսակների տասնյակի մեջ հայտնվել են դոնաթները, չիփսերը, գազացված բոլոր ըմպելիքները (պարունակում են վիթխարի քանակությամբ քիմիկատներ), «Սնիկերս»-ային տիպի սալիկները (շաքար, շաքար, շաքար և քիմիկատներ), խոզի տապակած կաշին (վաճառվում է փաթեթավորված, ուտում են սառը վիճակում), յուղայնությամբ ցածր զանազան քաղցրաբլիթներ (յուղի փոխարեն օգտագործվում են «մեծ քիմիայի» խառնուրդներ), կրեկերները (ալյուր, աղ, շաքար և քիմիկատներ), և պրետցելներ-աղի կրենդելներ (ալյուր, շաքար, աղ, քիմիկատներ):

Գիրացման անեծքը

Ամերիկյան առողջապահության գործակալությունը հաղորդում է, որ այն մարդիկ, որոնք ախտորոշված են «ճարպակալում» հակումով, ավելի շատ են բողոքում իրենց առողջությունից, քան սովորական կշիռ ունեցող մարդիկ. գիրուկների միայն 18 տոկոսն է հայտարարում, որ իրենց առողջությունը հրաշալի է: 41 տոկոսը, որոնք ունեն նորմալ քաշ, իրենց առողջությունը գնահատել են «լավ»: Մարդկանց 39 տոկոսը, որ տառապում է ճարպակալությամբ, իր առողջությունը գնահատում է «նողկալի»: Այսպես են իրենց որակում նաև շատ մարդիկ, որոնք ավելորդ քաշ չունեն:

Միացյալ Նահանգների Առողջության ազգային ինստիտուտի տվյալներով ավելորդ քաշ ունեցող մարդիկ 2,9 անգամ ավելի շատ են հիվանդանում շաքարախտով, 2,6 անգամ՝ քնի խանգարումով, երկու անգամ ավելի՝ ընկճվածության զգացման, ողնաշարի և հոդերի ցավերից: 1,7 անգամ ավելի շատ են ախտահարվում արթրիտով, տառապում են գլխացավերից, նրանց արյան մեջ բարձր է խոլեստերինի տոկոսը և 1,3 անգամ ավելի շատ են տանջվում ալերգիաներից:

Մանկական ճարպակալման պարադոքսները

1997 թվականին ամերիկյան միջին վիճակագրությամբ երեխան ուտում էր 12,2 կգ կոնֆետներ, 2001 թվականին այդ քանակը պակասել էր 1 կիլոգրամով: Միաժամանակ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի տվյալներով ավելորդ քաշ ունեցող երեխաների և դեռահասների բաժինը 11 տոկոսից բարձրացել է 15 տոկոսի:

Ճարպակալման դեմ պայքարող ամերիկյան ասոցիացիայի անցկացրած հարցումները ցույց են տվել, որ ծնողների 25 տոկոսը իրենց երեխաների ավելորդ քաշը բացատրում են վնասակար սննդով, 21,7 տոկոսը՝ ֆիզիկական ակտիվության անբավարարությամբ, 17,9 տոկոսը այս հարցում մեղադրում են հեռուստատեսությանը, համակարգիչներին, տեսախցիկներին, իսկ 11,3 տոկոսը հաստլիկ երեխաների գոյության գլխավոր պատճառը համարում են «զուտ ժառանգականությունը»:

Ճարպակալումը անչափ վատ է անդրադառնում առողջության վրա:

Բժշկական ապահովագրման կազմակերպության կենտրոնի վերջերս հրապարակված զեկուցագրի տվյալներով ամերիկացիների առողջության վատթարացումը ավելի ու ավելի է մեծացնում բժշկական կարիքների համար ծախսվող հսկայական գումարների չափը:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Երբ ասում ենք «ռասա» անմիջապես հիշում ենք ռասայական խտրականությունը: Բայց պարզվում է, որ այդ «խտրականությունը» կարող է բուժել մարդկանց: Ամերիկացի բժիշկներն այն կարծիքին են, որ բազմաթիվ հիվանդություններ ունեն ցեղային (ազգային-ռասայական) արմատներ, ուստի բուժման համար պետք է ուսումնասիրել տվյալ ռասայի առանձնահատկությունները:

Երկրաշարժ...

Երկրակեղևը սկսել է շարժվել: Հեռավոր Արևելքից մինչև Ատլանտյան օվկիանոսի ափերը, հյուսիսից հարավ երկրաշարժերի մի ալիք շատ տեղերում ապրելու, կառուցելու հարցը կասկածի տակ դրեց: Հարավային կղզիներից, Չուկոտկայից, Կամչատկայից էվակուացվում են գյուղեր ու ավաններ: Իսկ մեր լեռնաշխարհը արձանագրեց մի շարք ցնցումներ Էրզրումում, Վանում և Երևանում...

Փարավոնը մեռել է ինքն իրեն

Եգիպտական փարավոն Թութան Համոնը, որ մահացել է մեր թվարկությունից առաջ 1352 թվականին, 18-19 տարեկան հասակում, երկրային կյանքին հրաժեշտ է տվել բնական մահով և չի սպանվել՝ ինչպես ենթադրվում էր մինչև վերջերս: Այսպիսի հետևության հանգեցին գիտնականները, երբ փարավոնի մումիան ենթարկեցին տոմոգրաֆիական հետազոտության: Տոմոգրաֆիական ուսումնասիրությունը կատարվեց պարզելու, թե ինչ վիճակում է գտնվում մումիան, որին, սարկոֆագից հանելիս, բաժանեցին 13 մասի:

Ինչպես հայտարարեց Եգիպտոսի Հնությունների բարձրագույն խորհրդի գլխավոր քարտուղար Զահի Խավասը, գիտնականները մումիայի ընդհանուր վիճակը (բացառությամբ գանգի) գնահատեցին շատ անմխիթար:

Սակայն խոսքն այդ մասին չէ: Ինչպես հայտնի է, մինչև վերջերս գոյություն ունեին Թութան Համոնի մահվան մի քանի վարկած. փարավոնին սպանել են (գլխին հարվածել են սուր կամ բութ առարկայով), ընկել է մարտակառից, հիվանդացել է և մահացել: Եվ, այսպես, տոմոգրաֆիական հետազոտությունը ցույց տվեց, որ առաջին վարկածը (խփել են գլխին) լիովին բացառվում է: Ինչ վերաբերում է մյուս երկու վարկածներին՝ դրանք դեռ պետք է պարզել:

Ճապոնացիները նորից զարմացնում են

Եթե բախտ ունենաք ընկնել Ճապոնիա և գնացք նստեք, ամենևին չզարմանաք, եթե վագոնները անջատվեն գնացքից և գնան տարբեր կողմեր: Սա զառանցանք չէ, հարգելի ընթերցող, այլ՝ առաջընթաց: Ճապոնիայում մտահղացել են հասարակական տրանսպորտի նոր տեսակ՝ գնացքների շարժակազմին միացվել են միկրոավտոբուսներ, որոնք կարող են շարժվել և՛ ռելսերով, և՛ սովորական ճանապարհներով: Եթե Ճապոնիայի կառավարությունը հավանություն տա այս նախագծին, ապա քաղաքներում նոր երկաթուղագծեր կառուցելու անհրաժեշտությունը կվերանա:

Այնտեղ, ուր արդեն կա երկաթուղագիծ, գնացքը կգնա ռելսերով, իսկ եթե երկաթգիծ չլինի, ուղին կշարունակի ասֆալտե ճանապարհով:

Ինչպես կռահում եք, պարտադիր է լինելու անիվների փոփոխությունը՝ անվադողերից՝ գնացքի անիվներ և հակառակը: Անիվների այդ փոփոխության համար ծախսվում է 1 րոպեից էլ պակաս ժամանակ: Տրանսպորտային այդ նոր հայտնագործության շարժման արագությունը կազմում է 75 կիլոմետր/ժամ:

Գողանալը մեղք է

Մանհեթթենյան շտապ օգնություն զանգահարեցին սուպերմարկետից: Գնորդ մի կին վատ էր զգացել և ուշաթափվել: Արագ տեղ հասած շտապօգնության բժիշկը թեքվեց ուշաթափվածի վրա, արձակեց բաճկոնի կոճակները և քար կտրեց: Կնոջ կրծքի վրա հանգչում էր մի պարարտ սառեցրած հավ:

Ոստիկանական բաժանմունքում 36-ամյա տնային տնտեսուհի Էվի Բաբկերթը պատմեց, որ այդ օրը ինքը տուն է վերադարձել բավական ուշ: Ամուսնու գալուն քիչ ժամանակ էր մնացել, իսկ սառնարանը դատարկ էր և ընթրիք պատրաստելու համար տանը ոչինչ չկար:

Գալով խանութ, էվին հանկարծ հիշեց, որ դրամապանակը մնացել է տանը և... խելահեղ քայլի դիմեց: Խանութի սառնարանից վերցրեց մի պարարտ սառեցրած հավ և թաքցրեց բաճկոնի տակ, կրծքավանդակի հատվածում: Քիչ անց սառնությունից էվիի շունչը կտրվեց: Եվ քանի որ թաքցրած հավը մարդկանց ներկայությամբ չէր կարող հանել, նա շտապեց դեպի խանութի ելքը: Մի քանի քայլ չարած՝ նա ուշաթափվեց և տապալվեց գետին:

Դատարանը մտավ «ակամա գողի» վիճակի մեջ և շատ մեղմ պատիժ սահմանեց՝ փոքրիկ դրամական տուգանք:

Որքան մաքուր՝ այնքան վատ

Կա կարծիք, թե որքան մարդկությունը արդյունավետ է պայքարում գլոբալ տաքացման դեմ, այնքան արագացնում է այդ գործընթացը: Մտավախություն կա նաև, որ արդեն 2100 թվականին Եվրոպան կարող է վերածվել անապատի: Այսպիսի հետևության են հանգել բրիտանացի գիտնականները: Շարունակում է իշխել այն տեսակետը, որ ջերմաէլեկտրակայանների վառվող գազն ու նավթը ավելացնում են մթնոլորտ նետվող ջերմոցային գազերի ծավալը, որն էլ գլոբալ տաքացման գլխավոր պատճառներից մեկն է:

Հիմա գիտնականները այլ կերպ են մտածում: Նրանք գտնում են, որ գազի և նավթի այրումից առաջացած ծծումբի երկօքսիդի մասնիկները բարձրանալով մթնոլորտ, նվազեցնում են օդի թափանցելիությունը և արգելակում արևի ճառագայթների ներթափանցմանը երկրի մակերևույթ:

Այլ կերպ ասած՝ այդ մասնիկների խտությունը դառնում է հովանոց և պաշտպանում մեզ արևային ռադիացիայից: Ուրեմն որքան քիչ է այդ փոշու ծավալը, այնքան արևն ավելի հեշտ է իր վնասակար ճառագայթները հասցնում Երկիր:

Սակայն կա նաև այլ խնդիր. ծծմբի երկօքսիդը վնասակար է և՛ էկոլոգիայի, և՛ մարդկանց առողջության համար: Այնպես որ՝ անվավեր համարել բնական ջերմաէներգակիրների այրումը սահմանափակող միջազգային համաձայնագրերը, չի կարելի: Ստացվում է անհեթեթ վիճակ. որքան մենք ակտիվորեն ենք պայքարում մեր սեփական կենսագործունեությունը ապահովող նյութերի դեմ, այնքան Երկիր մոլորակը ուզում է ազատվել մեզանից: Երևի մարդիկ արդեն ձանձրացրել են ծերուկ մոլորակին:

(ռուսական մամուլից)

Հնագետ լրագրող Պոլ Բահինը իր ժամանակը անցկացնում է արշավախմբի հետ: Նա շարունակում է այն գործը, որը սկսեց Հեյնրիխ Շլիմանը 19-րդ դարի վերջին: Տրոյայի հայտնագործումը նրա գլուխգործոցն է: Իսկ ահա Պոլ Բահինը մի մեծ արշավախումբ է կազմակերպել պեղումները շարունակելու: Ճապոնացի հնագետները Քինիշի Ֆուժիմորոյի գլխավորությամբ ակնկալում են պատմա-ճարտարապետական մեծագույն հայտնագործություններ կատարել:

Վատ սովորությունը փորձանք է

Հիշո՞ւմ եք Իլֆի և Պետրովի անկրկնելի հերոս Շուրա Բալագանովին: Գրպանում ունենալով 5 հազար ռուբլի, տրամվայի վագոնում, սովորության համաձայն, թռցրեց մի դրամապանակ, որի մեջ ընդամենը մի քանի ռուբլի կար:

Նման մի դեպք կատարվեց վերջերս, ԱՄՆ-ի Տեխասի նահանգի բնակիչ Ջոզեֆ Բետանկուրի հետ: Վիճակախաղով նա շահեց յոթ և կես միլիոն դոլար: Մոտ մեկ ամիս հետո նա ստացավ շահած միլիոնները, իսկ մեկ շաբաթ էլ անց՝ ձերբակալվեց ոստիկանության կողմից:

- Ինչո՞ւ,- կհարցնեք դուք:

Բանը նրանում է, որ շահած գումարի մի մասով նա գնեց 1,6 կգ կոկաին՝ վերավաճառելու համար: Դա նրա մշտական զբաղմունքն էր: Թմրադեղի փաթեթը ոստիկանությունը հայտնաբերեց նրա բնակարանի թաքստոցում:

Հիմա մեկեն միլիոնատեր դարձած Բետանկուրին սպասում է ոչ թե տրոպիկական արևը, ծովի օրորող ալիքները, արմավենիներն ու տաք, ծերմակ ավազը, այլ բանտախուցը: Ենթադրվում է, որ նրա շահած միլիոնները կբռնագրավվեն՝ հօգուտ պետության:



Միլիարդատերերը

Ըստ «Ֆորբս» հրատարակության հաշվարկների, վերջին տարում աշխարհում միլիարդատերերի թիվն ավելացել է 102-ով և հասել 793-ի, իսկ նրանց միագումար կարողությունն աճել է 18 տոկոսով՝ մինչև 2,6 տրիլիոն դոլար: Ամենա-ամենա հարուստների ցուցակի առաջին երկու հորիզոնականները պահպանել են ԱՄՆ-ի քաղաքացիներ, «Մայքրոսոֆտ» ընկերության ղեկավար Բիլ Գեյթսը, որի կապիտալը վերջին տարում 46,5 միլիարդ դոլարից աճել է մինչև 50 միլիարդի, և ներդրող Ուորեն Բաֆետը, որի կարողությունը 44 միլիարդ դոլարից նվազել է 42 միլիարդի: Երրորդ տեղ է բարձրացել հեռահաղորդակցության մեքսիկացի մագնատ Կառլոս Սլիմ էլուն՝ 30 միլիարդ դոլար, չորրորդ տեղում է ԻԿԵԱ կահույքի խանութների ցանցի հիմնադիր՝ շվեդ Ինգվար Կամպրադը՝ 28 միլիարդ դոլար, հինգերորդը պողպատածուլական կայսրության սեփականատեր հնդիկ Լաքշմի Միթալն է՝ 23,5 միլիարդ դոլար, վեցերորդը Գեյթսի գործընկեր Թիմ Ալենը՝ 22 միլիարդ դոլար: Յոթերորդ հորիզոնականում հաստատվել է «Լուի Վուիտոն» և «Քրիստիան Դիոր» ընկերությունների ղեկավար՝ ֆրանսիացի Բեռնար Առնոն, ութերորդում է սաուդյան արքայազն Վալիդ բեն Թալալ ալ Սաուդը՝ 20 միլիարդ դոլար, իններորդում կանադացի հրատարակիչ Քենեթ Թոմսոնն է՝ 19,6 միլիարդ դոլար: Առաջին տասնյակը եզրափակում է Հոնկոնգի մի շարք կոնցեռնների սեփականատեր Լի Կաշինը՝ 18,8 միլիարդ:

Գիտություն
Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման
վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 9.11.2006թ.
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА